2015, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (444)

# Քրիստոնյա Հայաստան

[illegible]

## Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Օգոստոսի 16-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին մեծ շուքով նշեց Ս. Աստվածածնի Վերափոխման բերկրառատ տոնը: Միածնաէջ Մայր տաճարում, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների, բարերարների եւ ուխտավոր հավատացյալների, մատուցվեց ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

Սրբազան հայրը, իր քարոզում անդրադառնալով տոնի խորհրդին, ընդգծեց, որ սերը, հնազանդությունը, հեզությունը եւ խոնարհությունն այն առաքինություններն են, որոնք փոխել են, փոխում են եւ պիտի փոխեն այս աշխարհը՝ դարձնելով այն առավել բարի եւ օրինաբեր:

«Եվ այսօր մենք էլ՝ որպես Նրա աշակերտներ, խոսք ենք լսում մեր Տիրոջից, որ ասում է. «Ահա քո մայրը»: Սրբացնող եւ սրբարար այս խորանից տեսնում եմ այս աստվածակառույց տաճարը՝ լեցուն բազում մայրերով, որոնց հավատարմության, սրբության, հեզության, խոնարհության եւ հնազանդության օրինակն Աստվածամայր ս. Կույսն է: Մեզ համար մայր է ոչ միայն ս. Աստվածածինը, այլեւ այն սուրբ երկիրը, որտեղ մենք ապրում ենք եւ որից ուժ, եռանդ ու հոգի ենք ստանում: Մայր է մեզ համար այն Եկեղեցին, որի ս. Ավազանից ծնվելով՝ անդամագրվում ենք Քրիստոսի Եկեղեցուն: Մայր է նաեւ միածնաէջ այս տաճարը, որի Ավագ ս. Խորանը Տիրամորն է նվիրված: Սուրբ Կույսի կյանքի օրերը դեռեւս նոր էին սկսվել, երբ ընծայվեց տաճարին, նոր էր նա ճաշակել դեռատության քաղցրությունը, երբ դրան փոխարինեց մայրության բերկրանքին սպասելու օրինաբեր ավետիսը: Այսօր, սիրելինե՛ր, Աստվածամայրը մեզ հետ չէ, այլ նրա կենդանի օրինակն է մեզ հետ, եւ նրա բարեխոսությունը՝ որպես բոլոր քրիստոնյաների մայր»,- նշեց Մուշեղ սրբազանը:

Հավարտ սրբազան արարողության, Ս. Տրդատի բաց խորանում կատարվեց խաղողօրհնեքի հանդիսավոր կարգը, որի ժամանակ շարականի երգեցողությունից հետո ընթերցվեց օրվա խորհուրդն ամփոփող ավետարանական հատվածը, ապա ս. Ներսես Շնորհալու «Խաղողի օրհնության» աղոթքը:

Արարողությունից հետո խաղողի օրհնված ողկույզները բաժանվեցին հավատացյալներին:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*25 օգոստոսի*

### Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչներին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի:

Ողջունելով Վենետիկյան հանձնաժողովի ներկայացուցիչների այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում անդրադարձավ հայ ժողովրդի կյանքում Հայոց Եկեղեցու եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ունեցած հոգեւոր եւ ազգապահպան կարեւոր առաքելությանը, ներկայացրեց նաեւ հայրենիքի անկախության պայմաններում Եկեղեցու հոգեւոր կրթադաստիարակչական գործունեությունը:

Նորին Սրբությունն ի դեմս հյուրերի գնահատանք հայտնեց Վենետիկի հանձնաժողովին՝ օրենքների մշակման գործում Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերած աջակցության եւ խորհրդատվության համար: Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետը վստահությամբ ընդգծեց, որ հանձնաժողովի ներկայացուցիչների այցը Հայաստան կնպաստի լավագույնս հասկանալու Հայաստանի բնակչության մտածելակերպը, մշակույթը եւ քրիստոնեական արժեքների վրա խարսխված արժեհամակարգը:

Իր հերթին պրն Գագիկ Հարությունյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի մշակման գործընթացը եւ անցնող օրերի ընթացքում հանձնաժողովի հետ կատարած աշխատանքը՝ մասնավորապես ընդգծելով, որ արդեն հանրային քննարկման ներկայացված նախագիծն իրավական, ժողովրդավարական պետության կայուն սահմանադրական նախադրյալներ է ստեղծում:

Հանդիպման ժամանակ անդրադարձ եղավ նաեւ երկրում առկա կրոնական ազատություններին, Եկեղեցի-պետություն հարաբերություններին: Զրուցակիցները կարեւորությամբ ընդգծեցին Եկեղեցու դերը հասարակության կյանքում՝ խաղաղության ու համերաշխության պահպանման, ինչպես նաեւ ժողովրդավարական արժեքների ամրապնդման գործում:

## Կալիֆոռնիայի շաբաթօրյա դպրոցների ուսուցիչների հավաքը

Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի ջանքերով, հոգեւոր ու ազգային ծրագրերին զուգահեռ, զարթոնք են ապրում նաեւ թեմապատկան շաբաթօրյա դպրոցները: Վերջիներիս կրթական մակարդակի միօրինականացման ու զարգացման նպատակով առաջնորդարանի գիտակրթական հանձնախումբը՝ գլխավորությամբ հայմայնքի երախտավոր մանկավարժ, դոկտոր Էլլի Անդրեասյանի, համակարգում է հաստատությունների ուսումնական, գիտական ծրագրերը, կազմակերպում եւ իրականացնում է ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:

2015-ի օգոստոսի 15-ին առաջնորդանիստ Ս. Ղեւոնդյանց Մայր տաճարում տեղի ունեցավ ամենամյա հերթական աշխատանիստը: Բացման եւ օրհնության խոսքում առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը շնորհակալություն հայտնեց կազմակերպիչ մարմնին, որը սիրով եւ նվիրումով համախմբում է մայրենի լեզվի ջատագովներին: Ի նշան գնահատության՝ սրբազան հայրը խորհրդանշական հուշանվեր հանձնեց դոկտոր Էլլի Անդրեասյանին, ապա տեղեկացրեց, որ առաջիկա տարիներին նմանատիպ դասընթացներ ծրագրվում են կազմակերպել նաեւ հայրենիքում՝ Մայր Աթոռի հովանու ներքո:

Օրվա առաջին բանախոսն էր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտեմ Սարգսյանը, ով արեւմտահայերենի եւ արեւելահայերենի գեղեցիկ համադրությամբ ներկայացրեց «Լեզվական մշակույթը եւ նորագույն մեթոդները հայագիտության մեջ» նյութը:

Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության ընծայարանի դասախոս, դոկտոր Մինաս Գոճայանը, հիմնվելով տարբեր երկրներում երիտասարդների հետ աշխատելու իր հարուստ ճանաչողությանը, խոսեց «Մշակույթի դերը նոր սերնդի ազգային ինքնության գիտակցության մեջ» թեմայով:

*Շարունակությունը՝ էջ 2*

# Հայոց եղեռնապատումի պոեզիայի խորհուրդը

*Սկիզբը՝ թիվ 15*

Այսպես, ազգի ողբերգական ճակատագիրը, կորուստների ու անկումների պատմությունը դարձել են կայուն թեմա 20-րդ դարի բոլոր հայ գրողների համար՝ արեւմտահայ թե սփյուռքահայ, արեւելահայ թե խորհրդահայ, ընդհուպ այն աստիճան, որ անգամ այնպիսի զուտ քնարերգակ բանաստեղծ, ինչպիսին է Միսաք Մեծարենցը, գրել է.

*Քո՛յր, մոտեցի՛ր կըրակին,*
*Ծըխե տերեւն այս բուրյա՛ն,*
*Չի ամեն բան ինձ կրկին*
*Կը դարձընե հոտն արյան:*
*.....*
*Քո՛յր, մոտեցո՛ւր իմ ձեռքին*
*Աստվածաբոցն հըրացան,*
*Չի ամե՛ն բան ինձ կրկին*
*Կը հիշեցնե վրե՛ժն արյան....*

Հոգեկան ու ֆիզիկական ընդվզուն վիճակը, ցավը, հիասթափությունը, անչափելի կորուստները, ապա եւ ապրելու ու հաղթելու վճռականությունը տասնամյակներ շարունակ հայ գրողների համար դարձել են գրական ու բանաստեղծական ասելիք, պատկեր, խորհուրդ ու պատգամ:

Եղեռնի թեմայով ստեղծագործող մեր գրողների մի մասը զոհ դարձավ սպանդին, մի մասն աքսորվեց ու տարագրվեց, մի մասն էլ՝ հրաշքով մազապուրծ, ապաստան գտավ աշխարհի չորս ծագերում՝ դառնալով «Ռընոյի» ու «Ֆորդի» բանվոր, մանուֆակտուրայի գործավոր եւ կամ անտուն տարագիր: Ո՞ւր մնացին զոհրապները, վարուժանները, սեւակները: Ո՞ր թուրք մարդասպանը կտրեց նրանց կյանքի թելն ու անհայտ թողեց նրանց շիրմատեղերը: Եվ ո՞վ ընդհատեց ստեղծագործական այն ոսկե երակը, որ նրանցն էր, որը դեռ շատ երկար պիտի արգասավորվեր եւ հայ գրին ու մտքին անմահ էջեր պարգեւեր:

Հենց հայոց կյանքի արնաշաղախ այդ ընթացքն էլ Հովհաննես Թումանյանին հանգեցրեց իր քառյակներից մեկում աշխարհն ու մարդուն բնութագրելու սեփական ազգի ապրած տառապանքների հայեցակետով.

*Բերանն արնոտ Մարդակերը էն անբան*
*Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան,*
*Ձեռքերն արնոտ գընում է նա դեռ կամկար,*
*Ու հեռու է մինչեւ Մարդը իր ճամփան:*

Դառնացած բանաստեղծի դժգոհությունը ուղղվել է անգամ Աստծուն.

*Մի՞թե, աստվա՛ծ, դեռ բավական չըտեսար*
*Էսքան ավեր, վիշտ ու ցավեր, հեծություն,*
*Մի՞թե, աստվա՛ծ, հաճելի չեն քեզ համար*
*Աղոթք ու սեր, կյանք ու տաղեր զըվարթուն:*

***(«Տրտմության Սաղմոսներ»)***

Աշխարհի այս վիճակը աղետաբեր եղավ հատկապես հայ ժողովրդի համար, քանի որ նրա երկիրը դարձավ մի վայր, ուր, բանաստեղծ Մատթեոս Զարիֆյանի խոսքերով ասած, եղեռնը սփռեց «Ավերակույտ ու մեռելներ ամենդի», իսկ Ռուբեն Սեւակն այդ երկիրը բնութագրեց որպես զոհ գազանների, որ համայնասպառ բոցերի մեջ մխում է հար.

*Ու դո՛ւն, ո՛վ դժբախտ երկիր հայրենի,*
*Որ արիւնի տա՛ք շամանդաղի մէջ.*
*Զոհ՝ գազաններու խաղին վայրենի,*
*Ու համայնասպա՛ռ բոցերու անշէջ,*
*Կը մխաս, դժբախտ երկիր հայրենի....*

Գեհենից փրկված, վերապրող գրողներից քչերին հաջողվեց լիարժեք շարունակել իրենց ստեղծագործական կյանքը, գրել այն, ինչ տեսան եւ լսեցին, աշխարհին պատմել հայոց զուլումը: Վերապրող այդ գրողների համար եղեռնը բաց վերք եղավ ու երբեք չսպիացավ: Եվ բնական էր, որ նրանց սիրտը վշտահար մնաց մինչեւ իրենց կյանքի վերջը, նրանց հոգիները, ինչպես գրում է Վազգեն Շուշանյանն իր «Երկիր հիշատակաց» պոեմում, «սեւ շուշաններ» դարձան, իսկ կորսված հող հայրենին նրանց համար հար մնաց որպես «երկիր մը հիշատակաց»: Վերապրողների համար կյանքը դարձավ տեւական փնտրում, տեւական սպասում եւ տեւական վիշտ: Նրանք բոլորն ապրեցին՝ հոգում ու լեզվի տակ ունենալով դառնահամ վիշտը հայոց եւ հիշատակներն իրենց կորսված հայրենի տան ու հարազատների:

Կ. Զարյանի, Հ. Շիրազի, Պ. Սեւակի, Ռ. Դավոյանի՝ այդ թեմայով գրված պոեմները խտացումն են ոչ միայն Եղեռնի մղձավանջային տարիներին հայության ապրած ողբերգական իրողությունների, այլեւ դրսեւորումն են հոգեկան մի անել ու բարդ կացության, որի մեջ շարունակեց մնալ հայ մարդը ջարդերի ու աքսորների ավարտից հետո էլ:

Եվ բնական էր, որ անգամ բնության ընթացքն ու նրա գեղեցկությունները հայ բանաստեղծի մեջ պիտի ծնեին ծանր ու հոգեմաշ տրամադրություններ, որն Ավետիք Իսահակյանի պեզիայում իր յուրովի արտահայտությունն է գտել.

*Ահա նորեն գարուն եկավ*
*Օ՜, կտրեցեք, օ՜ կտրեցեք*
*Լեզուները թռչունների,*
*Որ չհանդգնեն երգել անհոգ*
*Երգերն իրենց տարփանքների՝*
*Մեր մորթված մանուկների*
*Ցրիվ եղած նշխարների*
*Փոշու վրա, որոնց պիտի*
*Ծածկեն անգութ ծաղիկները՝*
*Լիրբ, անզգա...*

Չպիտի զարմանալ, որ ելնելով ողբերգական իրականությունից ու իր հոգում կուտակված ցավերից՝ հայ գրողը իր գրիչը ստիպված եղավ երբեմն թաթախել նաեւ կարմիր մելանի մեջ, ստեղծել արյան ու մահվան պատկերներ.

*Հայրենիքիս վրէժին խօսքերը եւ տառապանքիս*
*տարիները ուղեղիս մէջ՝*
*Քալեցի՛ եւ քալեցի, յոգնած, ըմբոստ, ճշմարտախնդիր*
*ու միսակ,*
*Արիւնի քաղաքներէն ուրիշ քաղաքներ եւ գիւղերէ ի գիւղ...*

***(Սիամանթո)***

Այդ գրականության մեջ թեեւ գերակշիռ են կորստի ու խոր ցավի արտահայտությունները, բայց եւ առկա է ընդվզման ու դատապարտման խոսքը՝ ուղղված ոչ միայն «հիվանդ կայսրությանն» ու եղեռնի ոճրագործներին, այլեւ աշխարհի անտարբեր մարդկությանը: Այդպիսիք են Իսահակյանի «Հայդուկի երգերի» բորբոքուն կրակները, Թեքեյանի խոկումները, Վարուժանի եւ Սիամանթոյի պայքարի եւ դիմադրության կոչերը, որոնք դառնում են ապրելու եւ հարատեւելու կռվաններ, չարին հաղթելու համոզմունք, արդարության հասնելու կոչ:

*Ահա՛ քեզ ալ կը դիմեմ, եկո՛ւր եւ ճամփուս վրա ոռքի՛ երգե, որ արձակե՛մ,*
*Ճամփուս վրա ռազմերգե՛, որ քինահույզ զորեն եւ առհավետ արձակեմ*
*Իմ հավատքի զավակներուս վայրենալանջ երիվարները փոթորկապար...*
*Ըսե՛, որ գաղափարիս փարոսները հրդեհեմ չորս ծագերուն դիմաց,*
*Ըսե՛, որ թավալե՛մ ապառաժներուս կույտերը անիրավության կուրծքերուն,*
*Եվ ոտքի հանեմ հողիս հրդեհեն եւ ըմբոստ մարտիկներուն հետ,*
*Քինախնդրության եւ սարսափի բանակներուս արշավանքն ալ ահեղաշար...:*

***(Սիամանթո, «Դարերու վրեժ»)***

Եղեռնապատումի բանաստեղծությունը միշտ չէ, որ կոտորածի ու նախճիրների պատկերներ կերտեց: Ավելին, այդ պոեզիայի մեծ մասը արդար, գեղեցիկ ու խաղաղ աշխարհի տենչանք ու գովերգում է, ապրելու կոչ, կյանքը շարունակելու հորդոր: Հիշենք միայն Մեծարենցի «Ըլլայի՜, ըլլայի՜» շարքը, գյուղի եւ աշխատանքի պանծացման նրա երգերը, Վարուժանի «Հացին երգում» ներկայացվող ցանկալի կյանքի ու արարման պատկերները, Իսահակյանի ու Տերյանի սիրո հույզերի ու զեղումների աշխարհը, հայոց բնաշխարհի թումանյանական արտացոլումները, Ե. Չարենցի հայրենանվիրման պոռթկուն դրսեւորումները: Նրանք՝ հայ գրողները, այսօր՝ եղեռնից 100 տարի անց էլ սովորեցնում են, որ տառապանքը չպետք է կասեցնի կյանքի ու ազգի վերելքը, որ մեր ազգային վիշտը պետք է ուժի վերածել, որ կռիվը նաեւ սիրել է, նահատակ մեռնելը՝ հավերժ ապրել, որ թափված արյունը պետք է որպես հարության ջահ պարզել աշխարհին՝ ասելու համար, որ այն միշտ հիշվելու է ու չի ներվելու: Այս ամենի համար էլ նրանք բոլորը մեզ հետ են, հար մեր կողքին՝ իրենց ապրած օրերի, մտայնությունների ու տրամադրությունների բանաստեղծական բազմաբնույթ արտացոլումներով: Եվ հենց նաեւ նրանց ստեղծագործությունների շնորհիվ է, որ ամեն մի հայի կյանքում միշտ էլ ներկա է այն պահը, որ ապրիլի 24 է խորհրդանշում:

Հայ եղեռնապատումի մի մասը գրված է պատմական կոնկրետ իրադարձությունների հենքի վրա եւ դրանով իսկ ձեռք է բերում վավերական մնայուն փաստաթղթի արժեք, այլ խոսքով՝ ունի նույնպիսի նշանակություն, ինչպիսին պատմագրական վկայությունը: Գործերի մի մասն էլ գրվել է հենց դժնդակ բռնությունների պայմաններում, ինչը կրկնակի արժեք է հաղորդում դրանց՝ հաստատելով հեղինակների (Սիամանթո, Վարուժան, Սեւակ) հերոսական դիրքորոշումը՝ ամեն տեսակի սպանդին ու նախճիրին:

Իր ընդհանրության մեջ այդ պոեզիան գոյապայքարի ելած ժողովրդի ոգու դրսեւորումն է, ապրելու մղող եւ ապրեցնող խոսք՝ ուղղված թե՛ ժամանակակիցներին եւ թե՛ գալիք սերունդներին: Հայոց եղեռնապատումի պոեզիան նաեւ սիրո ու հիշատակի յուրովի տուրք է բոլոր նահատակներին եւ լեցուն է ներքին մեծ խորհրդով. եթե ազգ ես եւ անցյալ ունես ու պատմություն, իրավունք չունես ետ չնայելու: Իսկ եթե քո անցյալը լի է մեծ դեպքերով ու հարուստ իրադարձություններով, դու կրկնակի պիտի հենվես քո անցյալին ու գիտակցես, որ առաջ գնալու համար հարկ է առնվազն երկու բան՝ հիշողություն երկիր կորուսյալի եւ սեր, մե՛ծ սեր քո ազգակցի նկատմամբ, նահատակներիդ նկատմամբ, քո պատմության հանդեպ, որոնք այնքան անհրաժեշտ

են այս աշխարհում արժանապատիվ ապրելու համար: Հրապարակի վրա առկա գրականությունը հաստատումն է այն բանի, որ պատմական աննախադեպ ցնցումներն ու ազգային ողբերգությունները հաղթահարելու գործում հատկապես կարեւոր են մշակութային ու ոգեղեն արժեքները, որոնց ստեղծողներից մեկն էլ եղեռնի թեմաներով քերթվածներն են:

*Շարունակությունը՝ էջ 3*

# Կալիֆոռնիայի շաբաթօրյա դպրոցների ուսուցիչների հավաքը

*Սկիզբը՝ էջ 1*

Ներկաներին գեղեցիկ անակնկալ էր պատրաստել Փասադենայի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շաբաթօրյա դպրոցի տնօրեն Նորայր Տատուրյանը, ով յուրովի կամրջելով անցյալն ու ներկան՝ ցուցադրեց աշխարհում գոյություն ունեցող Հայոց ցեղասպանության կոթողներին նվիրված տեսաֆիլմ՝ հագեցած մշակութային, պատմական ու ճարտարապետական անդրադարձներով:

Օրվա վերջին դասախոսությունը՝ «Ինչպե՞ս ծրագրել դասը՝ ըստ մանկավարժական նոր մոտեցումների», իր մեջ ներառում էր բազմաթիվ արդիական հարցերի պատասխաններ, որոնց հաճախ առնչվում են ուսուցիչները: Փասադենայի «Վաչե եւ Թամար Մանուկյան» վարժարանի տնօրեն, դոկտոր Արմինե Մովսիսյանի վերոհիշյալ նյութը տալիս էր դրանց պատասխանները՝ հիմնված համաշխարհային մանկավարժության եւ սեփական փորձառության վրա:

Հարկ է նշել, որ նմանատիպ հանդիպումները ոչ միայն նորոգում են մանկավարժների գիտելիքները, ծանոթացնում ժամանակակից կրթության, գիտության նվաճումներին, այլեւ առիթ են ստեղծում առաջնորդարանի ջերմ մթնոլորտում միմյանց հետ կիսելու սեփական փորձառությունը:

Օրը հատկանշական էր նաեւ, որ աշխատաժողովին հյուրաբար ներկա էր Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան մանկավարժական համալսարանի օտար լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սոֆի Սարգսյանը, ում հետ էլ տեղի ունեցավ մտքերի ջերմ փոխանակություն:

Օգոստոս ամիսն է... Շաբաթօրյա վարժարաններում սկսվում է նոր ուսումնական տարին: Ժամանակակից դասագրքերով ու ծրագրերով թարմացած՝ դպրոցները բացում են իրենց հյուրընկալ դռները՝ այն հաստատ համոզմամբ, որ իրենց առաքելությունը պսակվելու է նորանոր հաջողություններով:

***Հովհաննես սրկ. ԳՈՒՄՐՈՒՅԱՆ***

# Բանաստեղծն ու իր ընթերցողը

Եկավ մի պահ, երբ հոգնած գրական բարքերից, գրական միջավայրի խարդավանքներից, պաշտոնական քննադատության հակագրական պահանջներից՝ Չարենցն ուղիղ դիմեց ընթերցողին: Ընթերցողը նրա համար դարձավ որոշակի կերպար եւ մարմնավորվեց «Էպիքական լուսաբաց» (1930) ժողովածուի («Ընթերցողիս», «Ընթերցող պոետին») եւ այդ տարիներին գրած այլեւայլ գործերում: Այս շրջանի «Թուղթ»-երում, ուղերձներում, ներբողներում ընթերցողի կերպարը երբեմն միավորվում է մուսայի, երբեմն բանաստեղծ բարեկամի ու գրական ընկերոջ («Մակագրություն գրքի վրա»), երբեմն քննադատի նախատիպերին:

Ի տարբերություն պաշտոնական քննադատության՝ ընթերցողին նա վստահում է եւ նրան դիմում այս խոսքերով.

*Լավ եմ գրել ես, թե վատ -*
*Սրտո՛վդ իմացիր,-*
*Չկա՛ ուրիշ քննադատ*
*Քո սրտից բացի (IV, 118):*

*Շարմանքով գուցե նայես դու իմ այս*
*Գրքի էջերին՝ թե՛ անշուք, թե՛ պարզ,*
*Հեգնանքով գուցե ժպտաս ու ասես,*
*Թե պոետը մեր այս ո՞ւր է հասել...*
*Բայց հասել է նա մի ջինջ պարզության,*
*Որ ձեռք է բերվում «դժվար վարժությամբ» (IV, 119):*

Վերջին բանաստեղծության շարունակության մեջ նա ընթերցողին նաեւ իր ստեղծագործական ծրագրերն է ներկայացնում եւ պարզում «տոկուն պարզությամբ» դյուրթող երգի գաղտնիքը:

Չարենցի համար ընթերցողը ոչ միայն պայմանական հավաքական հասկացություն էր, այլեւ որոշակի անհատը՝ գրական բարեկամը, ում նվիրում էր գրքերը, գրականության սիրահարը, գրական փորձեր անող մեկը:

Ահա հաջողվել է պարզել Չարենցի իրական ընթերցողներից մեկի հետքերը, ով ոչ միայն ճանաչել ու կարդացել է պոետին, նրա պես ենթարկվել ժամանակի հալածանքներին, այլեւ բանաստեղծական խոսքով դիմել է նրան եւ բացահայտել իր վերաբերմունքը ժամանակի ու ժամանակակիցների հանդեպ:

Այդ ընթերցողի անունն է Գառնիկ Ծահինյան, ում դատական գործը պահվում են Հայաստանի պետական արխիվում: Ո՞վ է այս մարդը, ի՞նչ է կատարվել նրա հետ եւ որպես ընթերցող ինչպե՞ս է արձագանքել Չարենցին:

Գառնիկ Պողոսի Ծահինյանը ծնվել է 1887 թ. Վաղարշապատում՝ աղքատ գյուղացու ընտանիքում, 1921-ից մշտական բնակություն է հաստատել Ստալինգրադում, կրթությունը՝ բարձրագույն, 1911-ին ավարտել է Էջմիածնի հոգեւոր ակադեմիայի լրիվ դասընթացը, հեղափոխությունից առաջ եւ հետո զբաղվել է մանկավարժությամբ: 1908-ից մինչեւ 1921 թ. հուլիս ամիսը եղել է ՀՅԴ անդամ, որպես կուսակցական՝ 1908-ին Թիֆլիսում մասնակցել է ընդհատակյա ժողովի, ինչի համար ձերբակալվել է ցարական իշխանությունների կողմից եւ 14 ամիս բանտարկվել: 1915-ին զինվորագրվել է հայոց կամավորական շարժմանը, եղել Դրոյի ղեկավարած առաջին ջոկատում՝ որպես «Զանգ» թերթի թղթակից: Թղթակցական գործունեությունը շարունակել է 1916-ին, իսկ 1917-ին Թիֆլիսում ղեկավարել է դաշնակցական բջիջ: Փետրվարյան հեղափոխությունից հետո զբաղվել է կուսակցական քարոզչությամբ: Երկրորդ անգամ ԽՍՀՄ ՆԳԺԿ պետքաղվարչության (ՊՔՎ = թկձ) կողմից ձերբակալվել է 1932 թ. հոկտեմբերի 2-ին Ստալինգրադում եւ 1933 թ. հունվարի սկզբին փոխադրվել Երեւան:

1921-ից բնակություն է հաստատել Ստալինգրադում:

Նրա դատական գործից ներկայացնում ենք առանձին վավերագրեր, որոնք ներկայացնում են հարցի էությունը:

«Հաստատում եմ
ՀայՊՔՎ պետի տեղակալ
Մուղդուսի
«15» հունվարի, 1932 թ.
ՈՐՈՇՈՒՄ
Մեղադրանք առաջադրելու եւ խափանման միջոց ընտրելու մասին
«15» հունվարի, 1932 թ., քաղ. Երեւան

Ես՝ ՀայՊՔՎ հետաքննական 3-րդ բաժնի օպերլիազոր Տ. Գրիգորյանս, քննելով Ծահինյան Գառնիկին վերաբերող հետաքննական-գործակալական նյութը, եւ, նկատի ունենալով, որ նա բավարար չափով մերկացված է այն բանում, որ, ՀԽՍՀ-ի Նոր Բայազետի գավառում լինելով դաշնակցական կառավարության արտակարգ լիազոր, 1920 թ. Հայաստանում բոլշեւիկների մայիսյան ապստամբության շրջանում գործուն եւ անմիջական ղեկավար մասնակցություն է ունեցել ապստամբության ճնշման, կոմունիստների գնդակահարությունների, ձերբակալությունների եւ աքսորի գործում: Նրա անմիջական ղեկավարությամբ գնդակահարվել են ապստամբության կազմակերպման գործուն մասնակիցներ, Գավկոմի բոլշեւիկների ընդհատակյա անդամներ եւ Հայաստանի ՌԿ(բ)Կ լիազորներ ընկ.ընկ. Հովհաննես Սարուխանյանը եւ Բատիկ Բատիկյանը, ինչպես նաեւ շատ այլ շարքային կոմունիստներ:

Ըստ այդմ ՎՃՌԵՑԻ՝

քաղաքացի Ծահինյան Գառնիկին ներգրավել որպես մեղադրյալ ըստ ՀԽՍՀ ՔՕ 70-րդ հոդվածի, հետաքննությունից եւ դատարանից խուսափելու հնարների խափանման միջոց ընտրել ձերբակալությունը»:

Ստորագրել են նույն օպերլիազոր Գրիգորյանը, հետաքննական 3-րդ բաժնի պետ Փանյանը եւ նույն բաժնի պետ Պողոսովը:

Որոշման մասին ամբաստանյալին հայտնվել է հաջորդ օրը:

Երեւանի ՊՔՎ-ի կողմից 1933 թ. հունվարի 16-ին, 25-ին, մարտի 14-ին, մայիսի 20-ին, 25-ին, 27-ին Ծահինյանը ենթարկվել է հարցաքննությունների:

Հարցաքննությունների ժամանակ տալիս է ՀՀ վարչապետ (5.V.1920 - 23.XI.1920) Համազասպ (Համո) Օհանջանյանի, ՀՅԴ եւ պառլամենտի անդամ, վաղարշապատցի բանաստեղծ Գառնիկ Քալաշյանի (1884-1921) անունները: Միջանկյալ նշենք՝ Չարենցը մտերիմ է եղել Գառնիկ Քալաշյանի հետ: Գ. Ադամյանին հասցեագրած «1921.1.XI, Մոսկվա» նամակում նրան բարեւներ է ուղարկում: Իսկ նրա մահից հետո նույն Ադամյանին հասցեագրած «1922.20.III, Մոսկվա» նամակում խորապես ցավում նրա կորստի համար եւ խոսում նրա ու Տերյանի գրական-քաղաքական բախտի մասին: Երբ կոմունիստ Տերյանը մահացավ, Հայաստանում իշխում էին դաշնակցականները, եւ ոչ ոք չհիշեց նրան: Իսկ երբ դաշնակցական Գառնիկ Քալաշյանը մահացավ, Հայաստանում կոմունիստներն էին, եւ դարձյալ ոչ ոք չհիշեց նրան: Չարենցը մտաբերում է Քալաշյանի «Երանի ձեզ, որ պիտի գաք» տողով սկսվող քառյակը եւ օրհնաբանում նրա հիշատակը (տե՛ս VI, էջ 384-387):

Պատմում է 1920 թ. Բասարգեչարում (Վարդենիս) եւ Նոր Բայազետում (Գավառ) ծավալված քաղաքական իրադարձությունների եւ դրանց իր մասնակցության մասին: Մերժում է բոլշեւիկ Հովհաննես Սարուխանյանի եւ այլոց գնդակահարությանն իր մասնակցությունը: Ծարունակում է. «Երբեք եւ ոչ մի տեղ չեմ եղել դասալիքության դեմ պայքարող արտակարգ հանձնաժողովի անդամ: Սարուխանյանին գնդակահարելու ոչ մի վճիռ չեմ ստորագրել, եւ նրան ոչնչացնելու հարցում ես կտրականապես ոչ մի մասնակցություն չեմ ունեցել»:

Մերժում է գիշերային խուզարկություններին եւ ձերբակալություններին իր մասնակցությունը:

«Ընկ. Օհանջանյանին հասցեագրած իմ 11/VIII.1920 թ. նամակի առթիվ, որի մեջ ասվում է. «Բոլշեւիկների կապակցությամբ ընդունված են վճռական եւ իրական միջոցներ, ինչի մասին ես գրել եմ Ռուբենին...»,- հայտարարում եմ, որ ներկա պահին ես կտրականապես չեմ հիշում ոչ մի փաստ այդ «վճռական միջոցներից»: Անցել է 13 տարի այդ օրերից, հեշտ չէ հիշել...»:

«Զբաղմունքով ես մանկավարժ եմ, բայց ունեմ գրողի-բանաստեղծի մասնագիտություն: ...1920 թ. նոյեմբերից մինչեւ այսօր ես գրել եմ մի շարք բանաստեղծություններ, արձակ էջեր, որոնք ոչ մի տեղ չեմ տպագրել, եւ այդ բոլորը մնացել է ինձ մոտ ձեռագիր վիճակում»:

Քննիչը հարցնում է Ե. Չարենցին նվիրված «բանաստեղծությունների տետրի» մասին՝ գրված 1932 թ. Ստալինգրադում:

-Այո՛, տետրն իմն է,- պատասխանում է ամբաստանյալը:

«Հարց. Ինչո՞ւ եք գովերգում «շովինիզմը, նացիոնալիզմը, ինդիվիդուալիզմը, մշակութային հեղափոխության ժխտումը, նսեմացնում կոլեկտիվիզմի դերը:

Պատասխան. Ես ընդունում եմ, որ իմ գրած այդ բանաստեղծություններն ունեն հակասոցիալիստական եւ հակահեղափոխական բնույթ»:

Հետո փորձում է արդարանալ Չարենցին նվիրված ծավալուն երկում առաջ քաշած դրույթների համար՝ կոմունիստը ժամանակ չունի Չարենց կարդալու, իսկ աշխատավոր ժողովուրդը երգում է փլավ եւ քաղցրավենիք:

*Ծարունակությունը՝ էջ 5*

# Հայոց եղեռնամատնության պոեզիայի խորհուրդը

*Սկիզբը՝ էջ 2*

Հայոց եղեռնը պատկերող պոեզիան յուրովի ներդրում է նաեւ համաշխարհային պատմության ու գրականության մեջ, դատապարտում բոլոր ջարդարարների ու մարդասպանների, նաեւ սեւ խարան 20-րդ դարին, այն դարին, որ պիտի լիներ լուսավորության ու գիտության զարգացման դար, բայց եղավ պատերազմների ու սպանդների դար: Իր ամբողջության մեջ այն հաստատում է մի ճշմարտություն. վիշտը չվերջացող ուժի աղբյուր է ու խթան դիմադրության, եւ որ որքան էլ ավերվել են հայոց տունն ու երկիրը, «տարագիր ծիծեռնակ» դարձած հայ մարդը, Ղազարոս Աղայանի «Հիշողություն» բանաստեղծության տողերով ասած, միշտ էլ հիշելու է կորցրածը եւ շարունակելու վերականգնել իր քանդված տունը.



*Ծիծեռնակը բույն էր շինում,*
*Ե՛վ շինում էր, ե՛ւ երգում,*
*Ամեն մի շյուղ կպցնելիս*
*Առաջվա բույնն էր հիշում:*

Ո՞րն է այդ հավատի ու հարատեւության գաղտնիքը: Ծահան Ծահնուրը այդ հարցին խորիմաստ պատասխանում է իր «Արդար գնդակահարություն...» էսսեում, ուր ներկայացվում է, թե ինչպես Քեմալ Աթաթուրքը բոլոր հայերին բնաջնջելու նպատակով հրամայում է վերացնել նաեւ այն ամենը, ինչը հայկական է, որոնց թվում եւ հայկական եկեղեցիների զանգերը: Թուրքերը հավաքում են ու ձուլում բոլոր զանգերը, բայց չեն գտնում մեկը, որը թաղված է հողի տակ, ու ոչ ոք չգիտի տեղը: Այդ անտեսանելի զանգն է, որ հողերի ընդերքից «կը հնչէ անվերջ եւ ձայն կու տայ իրենները», որը ոչ մի մարդ աշխարհում չի լսում՝ բացի հայերից, եւ յուրաքանչյուր հայ, որտեղ էլ որ նա գտնվի, լսելով նրա ձայնը, ինքն իրեն ասում է. «Սիրտս խոսեցավ»: Ահա հենց այդ անտեսանելի, բայց իմանալի ու լսելի զանգի կանչն է, որ ամեն հայի հայ է պահում ու նրան հարատեւության մղում: Այդ խորհրդավոր զանգի մի մեղեդին էլ հայոց բանաստեղծությունն է՝ մի՛շտ ընկալելի, մի՛շտ լսելի, մի՛շտ խորհրդալից, եւ եղեռնի թեմայով ստեղծված քերթվածներից ամեն մեկը յուրովի հաստատումն է Լեւոն-Զավեն Սյուրմելյանի «Ասացվածք ծառ տնկելու առթիվ» բանաստեղծության արտահայտած մտքի. «Մեռելներուս իբրեւ խաչ՝ ես այս ծառը տնկեցի»:

***Արծրուն ԱՎԱԳՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# [redacted]

*Սկիզբը՝ թիվ 15*

Հավատքն առաջինն է, որովհետեւ նախորդում է մյուս բոլորին, եւ հավատքով է սկսվում հոգեւոր կյանքն առհասարակ: Հավատքն սկիզբն ու արմատն է բոլոր առաքինությունների եւ հոգեւոր բարիքների: Սբ Հովհան Ոսկեբերանը «Հովհաննու Ավետարանի մեկնության» մեջ գրում է. «Սիրելինե՛ր, ամենուր մեզ պետք է հավատք. հավատքը բարիքների մայրն է եւ փրկության դեղը, առանց սրա մարդ չի կարող ունենալ որեւէ բան մեծամեծ ավանդություններից. այլ կնմանվի անգետ մարդկանց, որոնք անմտաբար կամենում են ծովն առանց նավի անցնել, սակայն ձեռքերը եւ ոտքերը բռնվում են մի փոքր լողալուց հետո, եւ չկարողանալով առաջ ընթանալ՝ անմիջապես ընկղմվում են ջրերի մեջ: Նույնպես էլ նրանք, ովքեր առանց հավատքի, միայն իրենց մտքով են ընթանում, նավաբեկության են ենթարկվում: Ինչպես Պողոսն է ասում ոմանց մասին, թե «Հավատքի մեջ նավաբեկ եղան» (Ա. Տիմ. Ա 19): Արդ, որպեսզի նույն ալիքները մեզ էլ չկործանեն, բռնենք հավատքի այս սուրբ խարսխից»:

Մեր ժամանակներում շատերը կարծում են, որ եթե կարողանան առաքինի կյանքով ապրել, եւ իրենց կատարած բարի գործերը գերազանցեն չար գործերին, ապա երկինք գնալուն կարժանանան: Աստվածաշունչն ասում է, որ ոչ ոք չի կարող արժանանալ երկինք գնալուն, Սբ Գիրքն ուսուցանում է, որ բարի գործերն Աստծո հետ ճիշտ հարաբերության մեջ մտնելու հարցում որեւէ նշանակություն չունեն. այսպիսի հարաբերության արժանանալու համար ոչինչ անել չենք կարող, որովհետեւ Աստված ամեն բան արել է մեզ համար:

«Ո՛չ թե արդարության գործերի համար, որ մենք արեցինք, այլ Իր ողորմության համաձայն մեզ փրկեց» (Տիտ. Գ 5):

«Որովհետեւ Աստծո շնորհով փրկվածներ եք հավատի միջոցով. եւ այս ձեզնից չէ, այլ պարգեւն է Աստծո, ոչ էլ ձեր գործերից է, որպեսզի ոչ ոք չպարծենա» (Եփես. Բ 8-9):

«Բայց առանց հավատի անհնար է Աստծուն հաճելի լինել» (Եբր. ԺԱ 6):

«Աստծո ուզած գործն այս է, որ հավատանք Նրան, Ում Նա ուղարկել է» (Հովհ. Զ 29):

Եթե մեր հավիտենական փրկությունը գործերի վրա հիմնված լիներ, եւ մենք զորու լինեինք վաստակել այն, ապա Աստված մեր պարտապանը կլիներ, ինչ-որ բան պարտք կլիներ մեզ (Հռոմ. Դ 1-8): Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված որեւէ մեկին որեւէ բան պարտք չէ, իսկ «մեր արդարությունը կեղտոտ լաթի նման է» (Եսայի ԿԴ 6): Ասվածից գալիս ենք այն եզրահանգմանը, որ առանց հավատքի միայն գործերը բավական չեն փրկության համար: Սակայն հավատքն էլ առանց գործերի չի արդարացվում, քանզի հավատքն առանց գործերի նման է մեկ թեւ ունեցող թռչնի կամ փակ դռան, կամ էլ՝ անպտուղ ծառի: Թռչելու համար պետք է երկու թեւ, փակ դռան համար՝ բանալի, ծառն էլ պտղից է ճանաչվում, իսկ հավատքը գործերով է կատարյալ եւ կենդանի: «Ինչպես որ մեռած է մարմինն առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատքն առանց գործերի» (Հակ. Բ 26): Միայն ասել, թե հավատում եմ, որ Աստված կա, եւ հեռու մնալ Աստծո պատգամներից ու պատվիրաններից, կնմանվենք դեւերին, որոնք հավատում են, բայց քանի որ չար են, սարսափում են. «Դու հավատում ես, որ մեկ է Աստված, լավ ես անում: Դեւերն էլ են հավատում եւ դողում» (Հակ. Բ 29): Այդ պատճառով սուրբ ավազանից ստացած հավատքը պետք է ամրապնդել եւ զորացնել բարի գործերով: Այսպիսով՝ վերջում հանգում ենք այն մտքին, որ հավատքն ու գործերը փոխկապակցված են եւ անբաժան, քանզի հավատքով սրբվեցինք մեղքի ժանգից եւ արքայությանն արժանացանք, իսկ գործով պահպանում ենք մեր հոգու մաքրությունն ու մեզ արժանավոր պահում: Հավատքով Աստծո որդեգրությունն ու շնորհն ենք ստանում, իսկ գործով՝ երկնային փառքին արժանանում: Հավատքով արքայության խոստումն առանք (ինչպես Աբրահամը), իսկ գործերի օգնությամբ մոտենում ենք խոստմանը: «Հավատքը գործակից եղավ նրա գործերին եւ գործերով էլ հավատքը կատարյալ դարձավ» (Հակոբ. Բ 22):

Մենք այժմ ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ բոլորս էլ հավատում ենք ինչ-ինչ բաների, սակայն ընդհանուր կարծիքն այն է, թե հավատալն ավելի էական է, քան հավատի օբյեկտը: Ցավոք, իրականում այդպես չէ: Հավատը փաստ չի ստեղծում: Ճշմարտությունը կախված չէ հավատից: Նշանակություն չունի, թե որքան ես ջանում. որեւէ բանի հավատալուց այն ճշմարտություն չի կարող դառնալ: Ասենք՝ սկսում ենք ամբողջ սրտով հավատալ, որ վաղը ձյուն է գալու, քանի որ այդպես եմ ուզում: Բայց դա չի կարող երաշխավորել ձյան գալը: Կամ, դիցուք, հավատամ, թե իմ հին ավտոմեքենան իրականում նոր մեքենա է, սակայն իմ հավատքը չի կարող փոխել փաստը: Ընկերներիցս մեկը կարող է գալ ինձ մոտ եւ ասել. «Արի գնանք իմ նոր ինքնաթիռով թռչելու»: Եթե ես հավատալով գնամ ու տեսնեմ, որ նրա ինքնաթիռը սարքին չէ, իսկ ինքն էլ նույնիսկ օդաչուական վկայական չունի, ապա իմ հավատքը, որքան էլ այն մեծ լինի, անհիմն է: Իսկ եթե մեկ ուրիշ ընկեր նույնպիսի առաջարկություն անի՝ ունենալով օդաչուական վկայական ու նոր ինքնաթիռ, այդ դեպքում իմ հավատքը շատ ավելի հիմանվոր կլինի: Ուստի էականն այն է, թե ինչին եմ հավատում, որովհետեւ հավատքս չէ, որ հավատքիս կիզակետը ճշմարիտ դարձրեց, այլ գոյություն ունեցող պարագան: Աստվածաշունչը եւս շեշտում է, որ կենսականորեն կարեւորը հավատի առարկան է՝ կիզակետը: Հիսուսն ասաց. «Եթե չհավատաք, որ ես եմ, կմեռնեք ձեր մեղքերի մեջ» (Հովհ. Ը 24), այնուհետեւ սրան ավելացվում է հետեւյալ նախադասությունը. «Որդուն հավատացողը հավիտենական կյանք ունի, իսկ Որդուն չհնազանդվողը կյանք չի տեսնի, այլ նրա վրա կմնա Աստծո բարկությունը» (Հովհ. Գ 36): Հետեւաբար՝ Սբ Գիրքն ավելի շատ ոչ թե հավատ ունենալն է կարեւորում, այլ նրա օբյեկտը, եւ առավել կարեւորվում է ոչ թե հավատացողը, այլ այն, ինչին հավատ է ընծայում: Հիսուսն ասաց. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը եւ Կյանքը: Ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ՝ Ինձնով» (Հովհ. ԺԴ 6): Այսպիսով՝ հավատքի մեծությունը չէ, այլ Աստծու մեծությունն է, որ նշանակություն ունի:

***Արման սրկ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ***

# [redacted]

Լոգոս եզրույթը՝ իբրեւ Հիսուս Քրիստոսի անձի մեկնաբանում, քրիստոնեական մտածողության մեջ առանձնահատուկ դեր ունի: Այն ծանրակշիռ ազդեցություն է ունեցել հելլենական մշակույթի վրա, մասնավորապես հույն փիլիսոփա Հերակլիտեսի, ստոիկյան իմաստասիրության, իսկ ավելի վաղ շրջանում՝ նաեւ Փիլոն Ալեքսանդրացու գրվածքներում:

Քրիստոնեական ավանդության մեջ Քրիստոսի նույնացումը Լոգոսի հետ խարսխված է Հովհաննես ավետարանչի խոսքերի (Ա 1) վրա, որն առանցքային տեքստ է Սուրբ Երրորդության դավանանքի համար: Սույն տեքստում Հիսուս ներկայացված է իբրեւ Աստծո Խոսք, եւ այդ գաղափարը կարմիր թելի նման անցնում է Հովհանու ողջ Ավետարանի միջով:

Մի շարք աստվածաբաններ պնդում են, որ Հովհաննես ավետարանիչը որդեգրել է Փիլոնի արտահայտած Լոգոսի գաղափարը եւ Հիսուսին նույնացրել է Տիեզերքը կարգավորող աստվածային սկզբունքի հետ:

Արդարեւ, շատ հեղինակներ կարծել են, որ Լոգոսի գաղափարը քրիստոնեական մտածողության մեջ ներմուծվել է հունական (ստոիկյան) փիլիսոփայության ազդեցությամբ, սակայն, այնուամենայնիվ, հարկ է հիշել, որ թեեւ Հովհաննես ավետարանիչը գրում էր հունարեն, սակայն, լինելով հրեա՝ մտածում էր սեմական աշխարհայացքի շրջանակներում:

Լոգոսի համատեքստում, պետք է ասել, որ այն հրեական մտածողությամբ արտահայտում է ոչ թե Տիեզերքի ներդաշնակության գաղափարը, այլ Աստծո ներկայության ձեւը:

Հարկ է նշել, որ Լոգոսից բացի՝ հրեաների մոտ կար նաեւ իմաստության նախագոյության գաղափարը, որն ակնհայտորեն արտահայտված է Առակաց Ը 22-36 համարներում: Այսպիսով՝ անհիմն է այն կարծիքը, ըստ որի՝ Լոգոսի գաղափարը վերցված է հույն փիլիսոփայությունից. այն խորապես սեմական բնույթի է:

Ինչպես նշվեց, Լոգոսի գաղափարը հիմնված է Հովհ. Ա 1-ի վրա, եւ այն իր զարգացումն է ստանում քրիստոնեական վաղ ջատագովների մոտ, որոնցից ամենանշանավորը Հուստինոս Վկայի մշակած տեսությունն է: Լոգոսն այս հեղինակի մոտ ձեռք է բերում ակնհայտ առանձնահատկություններ: Հուստինոս Վկան տարբերակում է երեք Լոգոս՝

1. Սերմանող Լոգոս,
2. Արտահայտված Լոգոս, որով ստեղծվեց աշխարհը,
3. Մարմնացած Լոգոս, որը Հիսուս Քրիստոսի լիակատար եւ վերջնական հայտնությունն է:

Մինչ այդ վաղ Եկեղեցում Քրիստոսի նշանակությունն արտահայտող բառերից էր «Որդի» եզրը: Սակայն, երբ քրիստոնեությունը հուդայական միջավայրից անցավ դեպի հելլենականը, անհրաժեշտ համարվեց «Որդու» պատկերը «թարգմանել» հասկացությունների լեզվով, որն էլ իրականացավ «Լոգոս» հասկացության միջոցով:

Երկար ժամանակ իշխում էր այն կարծիքը, որ Հովհանու մտապատկերում Լոգոսի գաղափարն առաջացել է լոգոսից, սակայն այսօր ուսումնասիրողները դարձյալ շեշտում են նրա հիկտակարանյան եւ վաղքրիստոնեական ակունքները: Հովհաննեսը դիմում է Խոսքի սուրբգրային ընկալմանը եւ Հիսուսի՝ այն քողարկված հավակնությանը, որ ինքը Աստծո վերջնական հայտնությունն է: Այնուամենայնիվ Լոգոս հասկացության կիրառումը բացարձակ առումով չի կարելի բխեցնել բացառապես հիկտակարանյան կամ հրեական ավանդություններից: Հովհաննեսը գտնվում է հուդայական հելլենիզմի «հոգեւոր» աշխարհում, որի լավագույն ներկայացուցիչն է հրեա կրոնական փիլիսոփա Փիլոն Ալեքսանդրացին: Վերջինս փորձում է կապել իմաստության հիկտակարանյան մտորումները Լոգոսի հունական մտահայեցողության հետ: Սակայն ակնհայտ են Փիլոնի եւ Հովհանու Ավետարանի նախաբանի տարբերությունները: Ի տարբերություն Հովհաննեսի՝ Փիլոնի համար Աստծո եւ աշխարհի միջեւ միջնորդող գոյացությունն է:

Հովհանու Ավետարանում Լոգոսի քրիստոսաբանությունը մեծ ազդեցություն ունեցավ քրիստոնեության պատմության վրա. այն հաստատապես ամրագրվեց քրիստոնեական ավանդության մեջ:

Չնայած, որ Լոգոսի գաղափարն ուներ սուրբգրային բավականին լավ հիմնավորում, այս մոտեցումն առաջ բերեց մեծ ճգնաժամ, որի հետեւանքով IV դարում առաջացավ դասական քրիստոսաբանությունը:

*Շարունակությունը՝ էջ 7*

# [redacted]

Տարիների հայ իրականության մեջ հաճախ է խոսվում սոցիալական բեւեռացման երեւույթի մասին: Ի դեպ, այդ բացասական իրողությունն առկա է եղել պատմական գրեթե բոլոր դարաշրջաններում: Հազարամյակների ընթացքում մեկ հասարակական-տնտեսական ֆորմացիան փոխարինվել է մյուսով, սակայն միշտ էլ մարդիկ բաժված են եղել երկու հակադիր սոցիալական ճամբարների՝ հարուստների եւ աղքատների: Միակ բացառությունը, թերեւս, նախնադարյան համայնական հասարակարգի շրջանն էր, որի ընթացքում հասարակական բեւեռացում ասվածը որպես այդպիսին գոյություն չուներ: Նախնադարյան համայնական կարգերին հաջորդեցին ստրկատիրությունը, ֆեոդալիզմը, բուրժուական կարգերը եւ, վերջապես, սոցիալիզմը, սակայն միշտ էլ մարդկային հասարակության մեջ կողք կողքի ապրել են հարուստները եւ աղքատները: Ի դեպ, նշենք, որ հասարակական բեւեռացումն իրականում ոչ թե լոկ սոցիալական խնդիր է, այլեւ բարոյահոգեբանական: Ապրելով Հայաստանի անկախ հանրապետությունում՝ մենք ինքներս մեր սեփական մաշկի վրա զգում ենք, թե ինչ բան է սոցիալական բեւեռացումը, եւ որքան ծանր են դրա հետեւանքները: Ինչեւէ, սույն հոդվածի նպատակը առկա սոցիալական անարդարությունները մեխանիկորեն արձանագրելը չէ, որոնք տեսանելի են ցանկացած մարդու: Մեր նպատակն է վերհանել սոցիալական բեւեռացում ծնող պատճառները: Ոմանց հայացքներում իշխում է մի համոզմունք, ըստ որի, եթե մարդը հարուստ է, ապա նա դրան հասել է համառ ու հետեւողական աշխատանքով, իսկ աղքատ են նրանք, ովքեր ծույլ են եւ չեն ցանկանում աշխատել կամ էլ շատ քիչ են աշխատում: Փորձենք պարզել, թե արդյոք այս տեսակետը ճշմարիտ է եւ օբյեկտիվ: Առանձին դեպքերում գուցեեւ՝ այո՛: Բայց եւ այնպես, մեր երկրում գործազուրկների մեծաթիվ բանակի կողքին կան նաեւ տասնյակ հազարավոր աշխատողներ, որոնք քաղաքակիրթ երկրների չափանիշներով դարձյալ չեն հաղթահարում աղքատության շեմը: Անշուշտ, աղքատության գնահատման չափանիշները կարող են շատ տարբեր լինել, եւ յուրաքանչյուր մարդ ու հասարակություն ինքն է ըստ իր սուբյեկտիվ դատողության որոշում, թե որն է այն սահմանագիծը, որից այն կողմ սկիզբ է առնում աղքատությունը: Ինչեւէ, ըստ մարդկային նորմալ տրամաբանության՝ բավականաչափ ապահովված պետք է համարել այն մարդուն եւ ընտանիքին, որը չունի պարենային ապահովության խնդիր, գլխավերեւում ունի տանիք, կարող է օգտվել որակյալ եւ մատչելի բուժծառայությունից, մի խոսքով՝ ապահովված է նվազագույն կենսապայմաններով, առանց որոնց մարդու ֆիզիկական գոյությունը պարզապես անհնարին է: Նշենք, որ ցանկացած առաջադեմ ու քաղաքակիրթ պետության տնտեսական համակարգում գործում է այսպես կոչված սոցիալական արդարության սկզբունքը: Վերջինս բնավ չի ժխտում հարուստների խավի գոյության իրավունքը, սակայն քաղաքակիրթ երկրներում հարուստ խավն ունի միանգամայն ռեալ պարտավորություն վճարելու այնպիսի հարկեր, որ հասարակության մեջ չմնա եւ ոչ մի քաղցած երեխա, ընչազուրկ թոշակառու կամ անաշխատունակ մարդ, որը զրկված է ապրուստի տարրական միջոցներից: Ավելին՝ առաջադեմ երկրներում եթե նույնիսկ մարդն աշխատունակ է, բայց գործազուրկ, պետությունը երաշխավորում է նրա ֆիզիկական գոյության նվազագույն պայմանները: Ցավալի է, բայց աշխարհի բազմաթիվ երկրներում չի գործում սոցիալական արդարության սկզբունքը: Մի խումբ մարդկանց կարողությունն աստղաբաշխական թվերով է գնահատվում, իսկ այդ ընթացքում միլիոնավոր մարդիկ սովամահ են լինում: Ցավով պետք է նշենք, որ մեր երկրում եւս առկա է ներկայացված իրավիճակը: Այժմ փորձենք հասկանալ, թե ինչու է սոցիալական մի փոքրաթիվ խումբ ձգտում անսահման հարստության: Արդյո՞ք այդ վիթխարի հարստությունն իսկապես անհրաժեշտ է մարդու լիակատար երջանկության համար: Փիլիսոփայական մտքի տեր եւ հոգեւոր արժեքներով առաջնորդվող ցանկացած մարդ ակներեւաբար այս հարցին ժխտական պատասխան կտա: Եվ իրոք, երբեմն հարուստ մարդիկ կարող են լինել շատ դժբախտ. այս վիճակի պատճառները հարկ է որոնել բարոյահոգեբանական դաշտում: Իսկ արդյո՞ք աղքատ մարդը կարող է լինել երջանիկ: Ակնհայտորեն այս հարցի պատասխանը եւս պետք է ժխտական լինի: Բանն այն է, որ ծայրահեղ աղքատությունը խեղդում է մարդկային հոգին, անձին հասցնում բարոյական դեգրադացիայի: Նույն բանը հավանաբար կարող ենք ասել ծայրահեղ հարստության մասին: Հարուստ կամ նոր հարստացած խավի մոտ հաճախ առաջանում է ամենակորողության եւ անպատժելիության մտայնությունը, իսկ չքավորներին տիրում է անսահման հիասթափության, հուսալքության, երբեմն էլ չարության ու ատելության զգացումը: Վերջին խմբին պատկանող մարդկանց մոտ հաճախ առաջանում է արդարացի ընդվզում՝ առկա անհավասարության ու անարդարությունների դեմ, եւ սա կարող է ծնունդ տալ բռնությունների եւ հանցագործությունների: Այսպիսի իրավիճակում էին հայտնվել, օրինակ, Ֆրանսիան 1789-1799 թթ. եւ Ռուսաստանը՝ 1917թ.: Անկասկած, հեղափոխությունը սոցիալական խնդիրներ լուծելու եւ արդարություն հաստատելու լավագույն միջոցներից չէ:

*Շարունակությունը՝ էջ 7*

# Բանաստեղծն ու իր ընթերցողը

*Սկիզբը՝ էջ 3*

«1921 թ. հունիսին դաշնակցություն կուսակցությունից հեռանալուց առ այսօր չեմ ունեցել քաղաքական տատանումներ: Իմ սոցիալ-քաղաքական գիծը պարզ էր եւ հստակ... Ինչ վերաբերում է գրական հարցերին, ապա այդտեղ ունեցել եմ տատանումներ եւ կոպիտ սխալներ: Շատերն են այդ հարցում սխալներ թույլ տվել, էլ ո՞ւր իմ նման շարքային ուսուցիչը: Ես ընդունում եմ, որ իմ անցյալի համար պարտավոր եմ պատասխան տալ աշխատավորության եւ խորհրդային իշխանության առջեւ: Վերջին անգամ խնդրում եմ Հայաստանի ՊՔՎ-ին դատավճիռը կայացնելիս ներողամիտ լինել իմ հանդեպ»:

1933 թ. մայիսի 28-ին (Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադրման օրը թերեւս պատահական չի ընտրվել) Հայաստանի ՊՔՎ-ի նախագահի տեղակալ Մուղդուսին հաստատում է թիվ 5988 հետաքննական գործի «Մեղադրական եզրակացություն»-ը: Ըստ ԽՀՍՀ ՔՕ 70-րդ հոդվածի՝ հաստատվում է, որ Շահինյանը նախկինում եղել է ՀՅԴ կուսակցության գործուն անդամ, խորհրդարանի անդամ, Բայազետի գավառում ՀՅԴ կուսակցության արտակարգ եւ լիազոր ներկայացուցիչ, որ իբր նրա անմիջական մասնակցությամբ եւ ղեկավարությամբ ճնշվել է մայիսյան ապստամբությունը, գնդակահարվել են Հովհաննես Սարուխանյանը, Բատիկ Բատիկյանը եւ ուրիշներ: Նշվում է, որ ներկայումս հանգուցյալ Գառնիկ Քալաշյանի հետ Շահինյանը բռնագրավել է ապստամբության բոլոր մասնակիցների ունեցվածքը, ինչը վերածվել է գողության՝ նշված եւ դաշնակցական այլ գործիչների ու սպաների օգտին:

Շահինյանի, Նոր Բայազետի քաղաքագլուխ Աֆրիկյանի (ներկայումս գտնվում է Պարսկաստանում) եւ Գավառի միլպետի հանձնարարությամբ քաղաքային հրդեհագրեր կազմակերպվել են մարտունեցի երեք աղքատ դասալիք:

Կցում են նաեւ 1920 թ. հունիսի 9-ի թվագրությամբ պահոցային մի նյութ՝ Շահինյանի եւ Քալաշյանի ստորագրությամբ զեկույց կառավարության նախագահին՝ ապստամբությունը ճնշելու մասին: Շրջանառվում է խմբապետ Համազասպի անունը:

Նշվում է խուզարկության ժամանակ գտնված Չարենցին նվիրված բանաստեղծությունների հակախորհրդային բնույթը:

Ստորագրել են հետաքննական 3-րդ բաժնի օպերլիազոր Օհանովը, նույն՝ 3-րդ բաժնի պետ Մարտիրոսյանը եւ նույն բաժնի ընդհանուր պետ Գեւորգովը:

Գործում եղած տեխնիկական բնույթի թերությունների պատճառով 1933 թ. սեպտեմբերի 3-ին ՀԽՍՀ համապատասխան մարմիններին զեկույցով դիմում է Անդրկովկասյան ՊՔՎ-ի համապատասխան պաշտոնյա Լիսենկոն:

Գործին կցված է Շահինյանի կնոջ՝ նույնպես մանկավարժ Արշալույս Շահինյանի դիմումը՝ գրված 8.IX.1933-ին Թիֆլիսից, եւ հասցեագրված ՀԽՍՀ դատախազին: Նա գրում է, որ իր ամուսինը բանսարկությունների զոհ է, որ այո՛, նախկինում նա եղել է ՀՅԴ անդամ, բայց խորհրդայնացումից հետո «վերջնականապես ու անվերադարձ» խզել է նախկին կապերը: Տասնմեկ տարվա համատեղ կյանքի փորձով կինը պաշտպանում է ամուսնու անբասիր վարքը եւ խնդրում ներել նրան՝ հաշվի առնելով Հայաստանի Կենտգործկոմի 1921 թ. ապրիլի 19-ի որոշումը:

Դատավճիռը կայացվում է 1933 թ. հուլիսի 21-ին եւ վերահաստատվում նույն թվականի սեպտեմբերի 15-ին. «Շահինյան Գառնիկ Պողոսի, 1887 թ. ծնված, մեկուսացնել համակենտրոնացման ճամբարում հինգ (5) տարի ժամկետով, ժամկետը հաշվելով 2.X.1932 թվականից»:

Գործը վերանայվել է ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից: Ըստ 11.VIII.1934 թ. 78-103 արձանագրության քաղվածքի՝ որոշվում է բանտարկության ժամկետը 5 տարուց դարձնել 3 տարի:

Անցնում են տարիներ:

ՀՀ գլխավոր դատախազի առաջին տեղակալ Մ. Գեւորգյանը 1991 թ. մայիսի 21-ին հաստատում է պետանվտանգության մարմիններում քննության վրա հսկող բաժնի դատախազ Վ. Մխիթարյանի եւ նույն բաժնի պետ Մ. Չիլինգարյանի «Եզրակացություն»-ը, ըստ որի՝

«Գ. Շահինյանը առաջադրված մեղադրանքները ժխտել է եւ իրեն մեղավոր չի ճանաչել, պատճառաբանելով, որ վերագրված մեղադրանքները ճշմարտությունից զուրկ են: Գործով նրա մեղադրանքը հիմնավորող որեւէ ապացույցներ չեն բերվել:

Նման պայմաններում Գ. Շահինյանին բռնադատելը հիմնավորված համարել չի կարելի, եւ նա ենթակա է արդարացման-ռեաբիլիտացման:

Համաձայն ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության 10.01.1989 թ. հրամանագրի առաջին հոդվածի՝ Գառնիկ Պողոսի Շահինյանին համարել ռեաբիլիտացված»:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

# ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

## ՕՐԵՆՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ թիվ 10-11,13-15*

### 4. Նորմատիվ բարոյագիտություն Փարիսեցիություն

Քրիստոնեական մարդկության սոցիալական կյանքը նշանակալի կերպով մնում է օրենքի իշխանության տակ, համարյա նույն չափով, ինչպիսին էր նախնադարյան տոհմի կյանքը, որոնք երկրպագում էին տոտեմների: Սակայն օրենքը կատարելագործվում է, բարելավվում՝ մնալով նույն սկզբունքում: Օրենքում կա մի հավիտենական տարր: Գնահատականները, որ պահանջվում են քրիստոնյայից, անսովոր դժվար են եւ տրվում է տառապանքով: Օրենքի մասին գնահատականները պարզ են եւ համեմատաբար հեշտ: Սակայն այդ պարզությունն ու հեշտությունը փակ են քրիստոնյայի համար: Նրանից պահանջվում է հենց օրենքի գնահատականը, որը արդեն օրենքով չպետք է կատարվի: Քրիստոնյայի գնահատականները միշտ պետք է հաղթահարեն փարիսեցիությունը, եւ չպետք է ընկնեն արտաքին անոմիզմի մեջ: Իսկ ամենամեծ դժվարությունն այստեղ անհատականի եւ սոցիալականի համադրության պահն է: Օրենքի բարոյագիտությունը՝ իր նախապատվությամբ սոցիալական բարոյագիտություն էր: Իսկ քրիստոնեական բարոյագիտությունը առավել անհատական է, քան սոցիալականը. նրա համար մարդկային հոգին ավելին արժե, քան աշխարհի ողջ թագավորությունը: Նման դրվածքը սարսափելի դժվարություններ է

ստեղծում օրենքի բարոյագիտության համար: Օրենքի բարոյականությունը առաջին հերթին նախընտրում է աշխարհի թագավորությունը: Օրենքի մարդկանց համար քրիստոնեությունը կարող է պատկերանալ որպես անարխիզմ: Դա էլ հենց, օրինակ, հաստատում է Ծ. Մորրասը (*Մորրաս Շարլ (1868-1952), ֆր. հրապարակախոս, գրաքննադատ, բանաստեղծ - թարգմ.*) (*Տե՛ս նրա «Romantisme et révolution»*): Նրա համար Ավետարանը անարխիստական եւ ավերիչ գիրք է: Կաթոլիկ Եկեղեցու մեծագույն ծառայությունը նա տեսնում է նրանում, որ կաթոլիկությունը քրիստոնեական անարխիստական, ավերիչ ուժերը դարձրեց կազմակերպչական՝ միանգամայն նման մեծ հավատաքննիչ Դոստոեւսկուն: Ծ. Մորրասը նախաքրիստոնեական, անտիկ գիտակցություն ունեցող մարդ է, նա մեկն է այն հռոմեացիներից, որոնք վախեցան քրիստոնեական ավերիչ ուժերից: Իսկ կաթոլիկության մեջ անցել էին հռոմեական տարրերը եւ փրկել դրությունը: Այդ ամենը բացահայտում են օրենքի եւ ուզածդ սոցիալական կացույթի հանդեպ քրիստոնեության խոր պարադոքսալությունը: Օրենքը, առանց որի անհնարին է սոցիալական կյանքը, նախաքրիստոնեական ծագում ունի: Իրավունքը բացահայտել է հռոմեական հեթանոս աշխարհը, իսկ քրիստոնեական աշխարհը որդեգրեց այդ իրավունքը: Այդ իսկ պատճառով քրիստոնեական աշխարհն ապրում է երկվությամբ, դուալիստական կյանքով. նա ապրում է ե՛ւ օրենքով ե՛ւ շնորհով: Եվ հարկ է ասել, որ միշտ չէ մարդու ազատությունը, մարդու անձի ազատությունը պաշտպանված շնորհի կացույթի մեջ, այն ավելի հաճախ պաշտպանվում է օրենքի կարգով: Սա է հենց օրենքի դրական առաքելությունը: Միջնադարյան աստվածպետությունը՝ հյուսիսային ու հարավային, կայսերական ու պապական, կամենում էր լինել հասարակություն, որը հիմնված լիներ ոչ թե օրենքի, այլ շնորհի վրա: Իսկ դա կաշառվում էր նրանով, որ ինքը՝ շնորհը, ենթարկվել էր օրինադրական վերածնության: Աստվածպետական բարեպաշտ հասարակությունը խորհրդանշում էր Աստծո թագավորությունը՝ բնա-պատմական կարգով, ինչն ընկած է հենց օրենքի հիմքում: Այն մարդու ազատությունը կախման մեջ է դնում մեկ այլ մարդու, իշխանության, ողջ հանրության շնորհաբեր վերածնությունից: Եվ երբ այդ շնորհաբեր վերածնությունը տեղի չի ունենում, մարդու ազատությունը ժխտվում է, նա ենթարկվում է բռնության, նրա հետ մերժվում են բոլոր իրավունքները: Այստեղ ի հայտ է գալիս օրենքի ողջ նշանակությունը՝ մարդու սոցիալական կյանքում: Մարդու կյանքը, նրա ազատությունն ու իրավունքը չեն կարող բացարձակապես կախված լինել ուրիշ մարդկանց, իշխանության եւ հասարակության հոգեւոր վիճակից: Մարդու կյանքը, նրա ազատությունն ու իրավունքը պետք է պահպանված լինեն նաեւ այն դեպքում, եթե ուրիշ մարդկանց, հասարակության, իշխանության հոգեւոր վիճակը բարձր չէ, եթե դրանք բավականաչափ լուսավորված չեն շնորհով: Հասարակությունը, որը կամենում է իրեն հիմնել բացառապես շնորհի վրա եւ չի ցանկանում ճանաչել օրենքը, կդառնա բռնապետական հասարակություն: Այսպես՝ կոմունիստական հասարակությունը նույնպես բացարձակապես հիմնված էր շնորհի վրա եւ ոչ թե օրենքի՝ չնայած այդ շնորհը մութ էր եւ ոչ քրիստոնեական: Արդյունքում ստացվում է բռնապետություն, այսինքն՝ աստվածպետության հակառակը: Մենք կանգնած ենք հաջորդ պարադոքսի առջեւ. օրենքը չի ճանաչում կենդանի, իրական, անհատականորեն անկրկնելի անձնավորությանը, չի թափանցում նրա ներանձնական կյանքը, սակայն պաշտպանում է այդ անձնավորությանը մեկ այլ անձնավորության ոտնձգություններից ու բռնություններից, պաշտպանում է անկախ այն բանից, թե այդ ուրիշ անձնավորությունը ինչ ուղղության եւ հոգեւոր ինչ վիճակի է պատկանում: Սա է օրենքի մեծագույն ու հավիտենական ճշմարտությունը: Քրիստոնեությունը պետք է ընդունի այդ ճշմարտությունը: Չի կարելի սպասել հասարակության շնորհաբեր վերածնությանը, որպեսզի մադու կյանքը դառնա տանելի: Ահա այսպիսին է օրենքի ու շնորհի փոխհարաբերությունը: Ես պետք է սիրեմ իմ մերձավորին Քրիստոսով. այս է ճանապարհը Աստծո արքայության: Սակայն եթե սեր չունեմ մերձավորի հանդեպ, ապա ես ամեն դեպքում պետք է կատարեմ մերձավորի հանդեպ օրենքը. պետք է լինեմ արդար ու ազնիվ նրա հանդեպ:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԵՐԳԵՐ

*Սկիզբը՝ թիվ 9*

### Ինչպես մի թագավոր իր պատանի որդուն հանձնարարեց պատասխանել հույն նվիրակներին

Ժամանակով Եգիպտոսում ապրում էր մի թագավոր, որ ուներ առաջնեկ որդի, որն իրենից հետո կրելու էր արքայական թագը: Ամենավաղ հասակից հայրը նրան դաստիարակության տվեց տարեց գիտնականներին, այնպես որ նա տասնհինգ տարեկան դարձավ՝ ամենեւին չիմանալով մանկական զվարճանք: Մի անգամ հայրը նրան հանձնարարեց պատասխան տալ հույն նվիրակներին: Այն ժամանակ, երբ պատանին ճառ էր արտասանում՝ պատասխանելով նվիրակներին, եղանակը փոխվեց, եւ անձրեւ տեղաց: Նա նայեց պալատի լուսամուտից եւ նկատեց՝ ինչպես ուրիշ տղաներ, անձրեւաջուրը հավաքելով, հարդով պատվար՝ ջրաղաց են պատրաստում: Այդ տեսնելով՝ նա պալատի աստիճաններով սլացավ ներքեւ, վազեց երեխաների մոտ եւ սկսեց նրանց հետ անձրեւաջուր հավաքել, ջրաղաց կառուցել եւ այլ զվարճանք մտածել: Բարոններն ու ասպետները գնացին նրա ետեւից եւ նրան պալատ վերադարձնելով՝ փակեցին լուսամուտները:

Պատանին պատշաճ պատասխան տվեց, եւ նվիրակները մեկնեցին: Իսկ հայրը կանչեց իմաստասերներին ու գիտուններին, նրանց տեղեկացրեց եղածը: Ոմանք պատանու քայլը վերագրեցին հեղուկների շարժին, ուրիշները՝ ոգու անհաստատությանը, երրորդները՝ բանականության խաթարմանը: Մեկը մի բան էր ասում, մյուսը՝ այլ՝ կախված իրենց զբաղմունքից: Իսկ մի իմաստասեր հարցեց. «Ասացե՛ք ինձ՝ ինչպես եք դաստիարակել այդ պատանուն»: Նրան պատմեցին, որ տղան դաստիարակվել է գիտնականների ու ծերերի շրջապատմամբ՝ առանց գիտենալու խաղ ու զվարճանք: Այնժամ իմաստունն ասաց. «Զարմանալու բան չկա, եթե բնությունը պահանջում է այն, ինչից նա զուրկ է եղել. բնական է մանկության շրջանում զվարճանալը, իսկ ծերանալիս՝ խորհելը»:



### Ինչպես Դավիթ արքան մտածեց իմանալ՝ որքան հպատակ ունի ինքը

Աստծու ողորմածությամբ հովվից թագավոր դառնալով՝ Դավիթը մի օր մտածեց պարզել, թե ինքն ինչքան հպատակ ունի: Իսկ դա Աստծուն տհաճ՝ սնափառությունից էր: Ուստի Աստված նրա մոտ ուղարկեց Իր հրեշտակին՝ ասելու. «Դավի՛թ, դու մեղք գործեցիր: Քեզ այս ասելու ուղարկեց Տերը: Դու կուզեիր երեք տարի տկա՞ր լինել, կամ՝ երեք ամիս թշնամիներիդ ձեռքի՞ն, թե՞ քեզ կհանձնես Աստծու դատաստանին» (հմմտ. Բ. Թագ. 13):

Դավիթը պատասխանեց. «Ինձ հանձնում եմ իմ Տիրոջ ձեռքը, թող վարվի այնպես, ինչպես Իրեն հարմար է»:

Եվ ի՞նչ արեց Աստված: Դավթին նրա մեղքի համար պատժեց՝ կործանելով նրա ժողովրդի մեծ մասը, քանզի նա սնափառության մեղքի մեջ էր ընկել՝ իր ժողովրդի բազմության պատճառով, եւ ահա Աստված սպանեց եւ պակասեցրեց Դավթի մարդկանց թիվը:

Մի անգամ Դավիթը ձի հեծած գնում էր եւ տեսավ Աստծու հրեշտակին՝ մերկացրած սրով մահ սփռելիս: Եվ հենց հրեշտակը սուրը քաշեց՝ հարվածելու մի մարդու, Դավիթն անմիջապես իջավ ձիուց եւ ասաց. «Մեսսե՛ր, ողորմիր Աստծու սիրուն, մի սպանիր անմեղին, այլ սպանիր ինձ՝ մեղավորիս»:

Այս մեծահոգի խոսքի համար Աստված ներեց ժողովրդին եւ դադարեցրեց կոտորածը:

### Ինչպես հրեշտակը Սողոմոնին հայտնեց, թե իր մեղքերի պատճառով Տերը նրա որդուն կզրկի թագավորությունից

Պատմում են, որ Սողոմոնը նույնպես մեղք է գործել Տիրոջը հակառակ եւ դրա համար դատապարտվել է թագավորությունից զրկվելու: Հրեշտակը նրան ասաց. «Սողոմո՛ն, դու մեղավոր ես, ուստի կվճարես թագավորությունովդ: Բայց մեր Տիրոջ կամքով՝ քո հոր բարի գործերի համար Տերը քո օրոք չի վերցնի թագավորությունը, բայց քո մեղքի պատճառով որդուդ կզրկի թագավորությունից»: Այս խոսքերով հասկացրեց՝ ինչպես հոր բարի գործերի համար հատուցվում է որդուն, նույն կերպ՝ նրա մեղքերի համար պատիժ կստանա որդին: Հայտնի է՝ որքան ջանադիր էր աշխատում Սողոմոնը մեր երկրի վրա եւ ինչպես իր մեծագույն իմաստության շնորհիվ ստեղծեց վիթխարի ու փառավոր թագավորություն: Նա հոգ տարավ նաեւ, որ այն օտար ժառանգների, այսինքն՝ օտար ցեղի շառավղի ձեռք չընկնի: Եվ բավականաչափ ժառանգորդներ ունենալու համար նա վերցրեց բազում կանայք ու հարճեր: Բայց Աստված՝ ճակատագրերն իրագործողը, արեց այնպես, որ բոլոր այդ կանանցից ու հարճերից միայն մեկը նրան որդի ծնեց: Այնժամ Սողոմոնն ամեն ինչ արեց, որպեսզի թագավորությունը Ռոբովամ անունով այդ որդու իշխանության տակ լինի: Այդ պատճառով որդու ամբողջ կյանքը, մանկությունից ի վեր՝ մինչեւ հասուն տարիք, անցնում էր ուսմամբ եւ անհամար խրատներով: Ավելին արեց. հսկայական հարստություն կուտակեց եւ պահեց հուսալի տեղ:

Ահա թե ինչ արեց. անհապաղ հաշտություն կնքեց բոլոր հարեւան իշխեցողների հետ, հանգստություն ապահովեց եւ դադարեցրեց իր նախարարների միջեւ խռովությունները: Իսկ որդուն սովորեցրեց ճանաչել աստղերի շարժումները եւ դյութել հոգիներին: Այդ ամենն անում էր, որպեսզի իրենից հետո թագավորեր Ռոբովամը:

Երբ Սողոմոնը մահացավ, Ռոբովամը կանչեց ծեր եւ իմաստուն մարդկանց եւ հարցրեց, նրանց կարծիքով ինքն ինչպես պիտի վարվի իր ժողովրդի հետ: Ծերունիները նրան այսպիսի խրատ տվին. «Հավաքի՛ր քո ժողովրդին եւ նրան դիմիր քաղցր խոսքերով, ասա՛, որ նրան անչափ սիրում ես, որ ժողովուրդը քո թագն է, եւ որ եթե քո հայրը նրա նկատմամբ դաժան է եղել, դու կլինես մեղմ ու ողորմած: Եվ խոստացիր, որ հորիցդ ճնշված ժողովուրդը քո օրոք կարող է երկար ժամանակ հանգիստ ապրել:

*Շարունակությունը՝ էջ 8*

# [redacted]

*Սկիզբը՝ էջ 5*

Ամենաճիշտ մոտեցումը աստիճանական բարեփոխումներ իրականացնելու մեջ է, սակայն շատ հասարակություններում սոցիալական խնդիրներ լուծելու այս եղանակն անիրական, եթե չասենք անհեթեթ է թվում: Այժմ հարց է առաջանում, թե ինչպե՞ս պատահեց, որ աշխարհի որոշ պետություններում՝ օրինակ սկանդինավիական երկրներում, հաջողվել է առանց զինված խռովությունների եւ մեծամասշտաբ արյունահեղությունների սոցիալական արդարություն հաստատել: Դա նշանակում է, որ այդ երկրների պետական վերնախավը եւ հարուստներն այնքան են հասունացել, որ գիտակցել են սոցիալական բեւեռացումից ձերբազատվելու կարեւորությունը: Սակայն խնդիրը միայն գաղափարական հասունացման մեջ չէ: Պարզապես աշխարհի մի շարք երկրների իշխանությունները հասկացել են, որ անհնար է հավերժ հալածել, ճնշել ու կեղեքել ժողովրդին եւ ընդմիշտ մնալ անպատիժ: Մի օր մեծամասնության համբերության բաժակը կարող է լցվել եւ անխուսափելիորեն կառաջանա սոցիալական բուռն ընդվզում, ինչի արդյունքում կարող են տուժել հենց ե՛ւ իշխող վերնախավը, ե՛ւ հարստացման մոլուցքով տարված մեծահարուստները: Ուստի անհրաժեշտ է հասարակության հարուստ խավի միջոցների առնվազն մի մասը բաշխել անապահով խավի միջեւ: Եթե բոլոր երկրներում այսպես էլ լիներ, ապա հնարավոր կլիներ խուսափել հեղափոխություններից, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ արյուն, վիշտ, ցավ ու տառապանք: Ակնհայտ է, որ ոչ մի հոգեպես հավասարակշռված մարդու պետք չէ սոցիալական հարցեր լուծելու այս եղանակը:

Գոյություն ունի մի ընդունված տեսակետ, համաձայն որի, որեւէ արատավոր երեւույթի դեմ արդյունավետորեն պայքարելու համար հարկավոր է վերհանել դրա բուն պատճառները եւ դրանք արմատախիլ անել: Այժմ փորձենք վերլուծել սոցիալական մեկ խավի անվերջ հարստանալու մոլուցքի հոգեբանական ակունքները: Վերցնենք օրինակի համար մեր երկրի մեծահարուստներին: Ի՞նչն է դրդում այս մարդկանց անընդհատ ձգտել հարստության: Այս հարցի պատասխանը, թերեւս, հարկ է փնտրել մեր պատմության մեջ: Դարեր շարունակ հայ ազգը բարիքներ է ստեղծել, որոշակի հարստություն է կուտակել, սակայն մեր բարբարոս հարեւան ժողովուրդները պարբերաբար հարձակումներ են գործել մեր երկրի վրա՝ սպառնալով հայերի թե՛ ֆիզիկական անվտանգությանը եւ թե՛ նրանց ստեղծած նյութական բարիքներին: Այս գործընթացը, անկասկած, փոխել է հայերի հոգեբանությունը. մեր ազգի զգալի մասը դարձել է նյութապաշտ եւ ընչաքաղց: Վախը վաղվա օրվա նկատմամբ, անապահովության զգացումը դարձան հայ ժողովրդի մշտական ուղեկիցները: Ասվածից պարզ է դառնում, թե ինչու են հայերն այսքան անհագ, ինչու են նրանք անընդհատ ձգտում անվերջ հարստանալու: Սակայն ողջ ցավն այն է, որ այդ հարստացումը տեղի է ունենում հարազատ ազգին կեղեքելու հաշվին: Եթե թաթար-մոնղոլները, արաբները, թուրք-սելջուկները հարստանում էին հայերին կամ որեւէ այլ ազգի թալանելու հաշվին, ապա հայը հարստանում է իր հայրենակիցների արյան գնով: Այս իրողությունը չափազանց մտահոգիչ է եւ շատ տարօրինակ: Սովորաբար ազգերը սեփական բարեկեցությունը ստեղծում են մեկ այլ ազգի դժբախտության հաշվին, ինչպես օրինակ՝ ադրբեջանցիները եւ թուրքերը: Հայ ժողովրդի հարստացման տրամաբանությունը միանգամայն այլ է, ինչում մեկնք կարող ենք հեշտությամբ համոզվել մեր դաժան իրականության մեջ: Երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հայ ազգի համար առաջին թշնամին հենց ինքը՝ հայ ազգն է: Ասվածը շատերի մոտ կարող է զարմանք եւ նույնիսկ վրդովմունք առաջացնել, սակայն առավել սթափ դատող մարդիկ հավանաբար կկիսեն վերջին տեսակետը: Այժմ փորձենք հիմնավորել վերջինս. եթե մի հայ մեկ այլ հայի համար արհեստականորեն ստեղծում է այնպիսի ծանր սոցիալ-հոգեբանական պայմաններ, որ վերջինս խուճապահար եւ հիասթափությամբ համակված լքում է իր հայրենիքը հանապազօրյա հաց վաստակելու եւ ավելի բարյացակամ ու արդար միջավայրում ապրելու համար, ուրեմն վերն արտահայտված տեսակետը ոչ թե անհեթեթություն է կամ անտեղի հանդգնություն, այլ մեր օրերի դառը իրականության օբյեկտիվ գնահատական: Ոմանք հավանաբար առկա իրավիճակը կբացատրեն նրանով, որ մեր երկրի ռեսուրսները փոքր են եւ չեն կարող բավականացնել բոլորին, ուստի եւ արտագաղթն անխուսափելի երեւույթ է: Բայց ինչո՞վ բացատրել մարդկանց անմարդկային եւ դաժան վերաբերմունքը միմյանց հանդեպ: Այս առնչությամբ էլ ոմանք գուցե կասեն, թե մարդիկ կորցրել են իրենց մարդկային կերպարը ծայրահեղ վատ սոցիալական պայմանների պատճառով: Անշուշտ, այս պնդման մեջ որոշակի ճշմարտություն կա: Հիշենք, օրինակ, Խորհրդային Միության տարիները: Համաձայնենք, որ այդ շրջանում մարդիկ համեմատաբար ավելի բարեհոգի էին ու բարյացակամ միմյանց նկատմամբ, քան ներկայումս: Սրա բացատրությունը, հավանաբար, այն է, որ սովետական մարդիկ սոցիալապես բավականաչափ ապահովված էին եւ չունեին վախ վաղվա օրվա նկատմամբ: Ուստի հարկ չկար չարանալու եւ նախանձով լցվելու միմյանց հանդեպ: Այսպիսով, կարելի է մի պարզ եզրակացության հանգել. ծայրահեղ աղքատությունն իրապես խեղում է մարդկային հոգին եւ զրկում նրան այնպիսի կարեւորագույն առաքինություններից, ինչպիսիք են բարությունը, մեծահոգությունը, բարյացակամությունը, գթասրտությունը եւ այլն: Եթե աղքատ մարդը զուրկ է մարդկային այս կարեւոր որակներից, կարելի է հասկանալ, սակայն անհասկանալի է, թե ինչու են հարուստները դրսեւորում նույն բացասական կողմերը: Ըստ մարդկային նորմալ տրամաբանության՝ եթե մարդը հարուստ է, նա պետք է որ նվազ նախանձոտ լինի, ավելի առատաձեռն, ինքնագոհ եւ ինքնաբավ, հետեւաբար, նաեւ ավելի բարեհոգի, սակայն կյանքում ամեն բան այնքան միանշանակ չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Երբեմն աղքատ մարդը կարող է այնպիսի հպարտ, արժանապատիվ եւ ազնվական կեցվածք ու պահվածք ունենալ, որից զուրկ են հարուստներից շատերը: Լինում են նաեւ դեպքեր, երբ մեծ հարստություն կուտակած անձը եւս մարդկային բարձր որակներ է դրսեւորում: Որպես ապացույց ասվածի՝ հիշենք մեծահարուստներ Գալուստ Գյուլբենկյանին եւ Ալեքսանդր Մանթաշյանցին, ովքեր իրենց նյութական կարողության մի զգալի մասը ներ էին դրել ի բարօրություն հարազատ ժողովրդի եւ հայրենիքի՝ հասկանալով, որ այդ երկուսից ավելի թանկ բան իրենց համար գոյություն չունի: Մնում է միայն հուսալ, որ մեր օրերի հայ մեծահարուստները կորդեգրեն Մանթաշյանցի եւ Գյուլբենկյանի նմանների ճշմարիտ մտածելակերպը եւ իրենց կարողության առնվազն մի մասը կծառայեցնեն ի բարօրություն հարազատ ազգի ու երկրի: Հավատացած ենք, որ ոչ մի բարի գործ չի մոռացվելու ժողովրդի կողմից եւ վաղ թե ուշ ըստ արժանվույն գնահատվելու է:

***Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու***



# [redacted]

*Սկիզբը՝ էջ 4*

Հունական փիլիսոփայության մեջ, Հերակլիտեսից սկսած, Լոգոսը ցույց էր տալիս իրականության ներքին իմաստային եւ ռացիոնալ միությունը: Լոգոսն իրականության մի մասն է եւ դրա միավորիչ ուժը: Մարդկային բանականությունը եւ խոսքը (երկուսն էլ բնորոշվում են Լոգոս եզրույթով) թույլ են տալիս բանականությանն ընկալել Հայտնությունը:

Լոգոսի, Աստծո եւ աշխարհի հույն փիլիսոփայության համատեքստում կա ակնհայտ մոնիստական միտում, որը նման ձեւով չէր կարող որդեգրվել քրիստոնեական աստվածաբանության կողմից: Իրավիճակը փոխվեց, երբ ուշ հելլենիզմում քանդվեց տիեզերքի ներդաշնակ կարգավորությունը, Աստվածայինը այլեւս չէր համարվում իրականության ներքին պատճառը, այլ հակառակը՝ Աստված վերածվեց բացարձակ անդրանցական եւ անճանաչելի էակի: Բնականաբար նման բարդ եւ խնդրահարույց վիճակում Լոգոսի բուն քրիստոնեական ըմբռնումը հնարավոր դարձավ միայն մաքրագործման եւ քննադատական տարբերակման երկարաժամկետ գործընթացից հետո:

Իր «Կրատիլոս» երկխոսության մեջ Պլատոնը վիճում է սոփեստների այն կարծիքի հետ, որի համաձայն արտաքին խոսքը կամածին է՝ հիմնված պայմանական նշանի վրա: Պլատոնը, հերքելով այս կարծիքը, պնդում է ներքին եւ արտաքին խոսքի միասնությունը: Ըստ նրա՝ արտաքին խոսքը իրերի պատկերն ու խորհրդանշանն է, իսկ իրերը նախ եւ առաջ ճանաչում ենք ոչ թե զգայական փորձառությամբ, այլ իրականության ներքին ըմբռնմամբ: Այդ առումով, ըստ Պլատոնի, ճանաչողությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հոգու երկխոսությունն ինքն իր հետ: Պլատոնի այս խորհրդածություններն Օգոստինոս Երանելուն օգնում են ստեղծելու Լոգոսի հստակ քրիստոսաբանությունը:

Աստծո Լոգոսի գաղափարն ունի նախաքրիստոնեական ակունքներ՝ մասնավորապես հելլենիստական աշխարհում: Լոգոսը՝ իբրեւ անդրանցական եւ ներհատուկ աշխարհների միջեւ միջնորդ, ինչպես նաեւ վաղ հուդաիզմի ավանդության մեջ՝ իբրեւ Աստծո իմաստություն (տես Առակաց 8): Լոգոսի գաղափարն իր զարգացմանն է հասնում առավելապես Փիլոն Ալեքսանդրացու գրվածքներում, որտեղ այն կատարում է անդրանցական Աստծո եւ փոփոխական աշխարհի միջեւ միջնորդի դերը:

Հովհանու Ավետարանի նախաբանը (Ա 1-14) թեեւ որոշ ժամանակ համարվում էր հելլենիզմի արգասիք, սակայն ժամանակակից ուսումնասիրությունները ցույց են տվել դրա սերտ կապը սեմական աշխարհընկալման հետ:

Լոգոսը՝ իբրեւ հելլենիզմի եւ վաղ հուդայականության գաղափար եւ համադրություն, իր հետագա զարգացումն է ստանում քրիստոնեական ջատագովության մեջ, որտեղ առաջ է քաշված այն գաղափարը, որ Քրիստոսը համարժեք է հելլենիզմի Լոգոսի ստոիկյան ըմբռնմանը: Այս ամենը նախահիմք ծառայեց մի շարք վիճաբանությունների համար՝ կապված երկնային Լոգոսի կարգավիճակի եւ Հիսուս Քրիստոսի անձի խորհրդի հետ:

***Արման սրկ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ***

# Խորհուրդ

*Սկիզբը՝ էջ 6*

Եվ եթե հայրդ նրանց ծանրաբեռնել է տաճարի շինարարությամբ, դու կթեթեւացնես նրանց բեռը»: Իմաստուն տարեցներն այդպես խրատեցին նրան:

Ռոբովամը գնաց եւ խորհրդի հրավիրեց երիտասարդ մարդկանց եւ նրանց նույն հարցը տվեց: Նրանք ասացին. «Իսկ նրանք, ում հետ խորհրդակցել ես մեզնից առաջ, քեզ ի՞նչ խորհուրդ տվին»: Նա ամեն ինչ բառ առ բառ հաղորդեց նրանց: Այնժամ երիտասարդ մարդիկ ասացին. «Քեզ խաբել են նրանք, որովհետեւ իշխանությունը դիմանում է ոչ թե խոսքով, այլ սխրանքով ու անվեհերությամբ: Ուստի եթե սկսես քաղցր խոսքեր ասել, ժողովրդին կթվա, թե դու իրենցից վախենում ես, եւ ժողովուրդը քեզ իրեն կենթարկի եւ իր թագավորը չհամարելով՝ քեզ չի հպատակվի: Ավելի լավ է՝ լսիր մեր խորհուրդը. բոլորս քո ծառաներն ենք, իսկ իշխանապետը կարող է ծառաների հետ վարվել՝ ինչպես իրեն հարմար է: Դրա համար նրանց համարձակ եւ վճռականորեն ասա՛, որ իրենք բոլորը քո ծառաներն են, իսկ եթե մեկը հրաժարվի քեզ ենթարկվելուց, նրան պատժիր քո օրենքի ամբողջ խստությամբ: Եթե Սողոմոնը նրանց ծանրաբեռնել է տաճարի կառուցմամբ, դու կծանրաբեռնես այլ կերպ, եթե կամենաս: Ժողովուրդը կհասկանա, որ դու մանուկ չես, բոլորը կվախենան քեզնից, եւ դու այդպես կպահես արքայությունն ու գահը»: Անմիտ Ռոբովամը հետեւեց երիտասարդների խորհրդին. հավաքեց ժողովրդին եւ նրան դիմեց խստագույն խոսքերով: Ժողովուրդը տրտնջաց: Նախարարներն անհանգստացան, սկսեցին լարվել նրա դեմ եւ միմյանց հետ միություն կազմել: Մի քանի նախարար խռովություն բարձրացրին, եւ Սողոմոնի մահից երեսունչորս օր հետո Ռոբովամը կորցրեց իր տասներկու թագավորություններից տասը, քանի որ հետեւեց երիտասարդ մարդկանց անմիտ խորհրդին:

**Ինչպես արքայազնը իմաստնաբար պարգեւատրեց Ասորիքից վտարված թագավորին**

Ավլիքս անունով հույն մի արքա, որի իշխանության տակ էր հսկայածավալ մի կայսրություն, ուներ պատանի որդի: Նա հանձնարարեց իր որդուն ուսուցանել յոթ ազատ արվեստները եւ դաստիարակել բարո կյանքի, այսինքն՝ բարի սովորությունների:

Մի անգամ արքան շատ ոսկի տվեց տղային ու ասաց. «Ծախսիր՝ ինչպես կամենաս»: Եվ նախարարներին հրամայեց՝ նրան ծախսել չսովորեցնել, այլ միայն հետեւել՝ նա ինչպես կպահի իրեն եւ ինչպես կվարվի:

Ամենուր հետեւելով տղային՝ նախարարները մի անգամ նրա հետ կանգ առան լուսամուտի առջեւ: Պատանին մտասույզ կանգնել եւ նայում էր դրսում անցուդարձ անող մարդկանց՝ արտաքին տեսքով ու հանդերձանքով առաքինի:

Ճանապարհն անցնում էր պալատի առջեւով: Պատանին հրամայեց իր մոտ բերել բոլոր այդ մարդկանց: Նրա կամքը կատարվեց, անցորդները նրա առջեւ էին: Նրանցից մեկը՝ ամենահամարձակը, ուրախ դեմքով հարցրեց. «Մեսսե՛ր, քեզ ի՞նչ է հարկավոր»:

Պատանին նրան հարցրեց. «Ինձ ասա՝ որտեղացի ես եւ ինչով ես զբաղվում»:

Նա պատասխանեց. «Մեսսե՛ր, ես շատ հարուստ վաճառական եմ՝ Իտալիայից: Հարստությունս ժառանգաբար չեմ ստացել, այլ ձեռք եմ բերել իմ ջանքերով»:

Ապա պատանին դիմեց հաջորդին, որ վեհ կեցվածքով, բայց մռայլադեմ կանգնած էր մի փոքր ետ. նրան հորդորեց մոտենալ: Վերջինս ոչ այնքան համարձակ հարցրեց. «Քեզ ի՞նչ է հետաքրքրում, մեսսե՛ր»:

Պատանին պատասխանեց. «Ասա՝ ով ես եւ ինչ զբաղմունքի»:

Նա ասաց. «Ես Ասորիքից եմ եւ՝ թագավոր, բայց ինձ այնպես էի պահում, որ հպատակներս վտարեցին ինձ»:

Այնժամ պատանին ամբողջ ոսկին տվեց այդ տարագրվածին:

Այս լուրը տարածվեց ամբողջ պալատում: Նախարարները, ասպետները եւ մյուս մարդիկ երկար քննարկում էին պատահածը եւ ասում. «Ոսկին մսխված է»:

Միայն այդ մասին էին խոսում պալատում: Այս ամենը պատմեցին հորը՝ թե՛ հարցերը, թե՛ պատասխանները՝ բառ առ բառ:

Արքան լսեց շատ նախարարների եւ որդուն դառնալով՝ ասաց. «Ինչո՞ւ այդպես վարվեցիր: Քեզ ի՞նչ միտք էր ղեկավարում: Ի՞նչ իմաստ ունի, որ նվիրեցիր ոչ թե նրան, ով ձեռք է բերել իր բարի գործով, այլ նրան, որ իր մեղքով ու անմտությամբ կորցրել է ամեն ինչ»:

Իմաստուն պատանին պատասխանեց. «Մեսսե՛ր, ես չպիտի նվիրեի նրան, որ ոչինչ չսովորեցրեց ինձ, եւ ընդհանրապես ոչինչ չեմ նվիրել: Այն, ինչ արեցի, նվեր չէր, այլ՝ պարգեւ: Վաճառականն ինձ բան չսովորեցրեց, եւ նրան ոչինչ չէր հասնում: Իսկ մյուսը, իմ նմանը լինելով՝ արքայազն, որ կրել է արքայական թագ եւ անմտորեն այնպես է վարվել, որ հպատակներն իրեն վտարել են, այնքան բան սովորեցրեց ինձ, որ հպատակներս ինձ չեն վտարի: Ուստի իմ ընծան փոքր էր այդքան շռայլ դասի համեմատ»:

Լսելով տղայի այդպես դատելը՝ հայրն ու նախարարները գովեցին նրա իմաստությունը՝ ասելով, որ նա, մանուկ լինելով, մեծ հույս է ներշնչում, որ հասուն տարիքում մեծ մարդ կդառնա:

Եվ բոլոր երկրները թղթեր առաքեցին թագավորներին ու նախարարներին, եւ գիտնականները մեկնություններ էին անում այդ մասին:

*Շարունակելի*

***Ռուսերենից թարգմանությունը՝***
***Արշակ ՄԱՐՈՅԱՆԻ***

## Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

# ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 6*

Չի կարելի մերժել օրենքը եւ սպասել սիրո իրականացումին: Սա եւս կլիներ երեսպաշտություն: Ես պետք է չգողանամ, չսպանեմ, չբռնանամ, երբ նույնիսկ սեր չունեմ: Այն ինչ շնորհից է, միշտ բարձր է, քան այն, ինչն օրենքից է եւ որը ցածր չէ: Բարձրը չի ժխտում ցածրը, այլ այն ներառում է իր մեջ՝ վերափոխված կերպով: Չարիքը բուն շնորհի ու սիրո օրինադրական խեղումն է, նա էլ հենց տանում է բռնության եւ ազատության մերժման, օրենքի լիակատար բացասման: Այդպես է որոշվում օրենքի բարոյագիտության եւ փրկաբանական բարոյագիտության միջեւ հարաբերությունները: Քավության բարոյագիտությունը չի կարող գրավել օրենքի բարոյագիտության տեղը, նա այդ ժամանակ կդառնա բռնազավթող եւ կմերժի ազատությունը: Սրանք երկու համագոյակցող կացութեր են: Եվ միշտ շնորհի կացությունը պայծառակերպումի եւ վերափոխումի կացույթ է եւ ոչ թե բռնակալության: Օրենքի բարոյագիտության բարձրագույն կերպարն իրավունքն է:

Օրենքի եւ շնորհի, օրենքի բարոյագիտության եւ փրկաբանական բարոյագիտության հակասությունն անցնում է բարոյական ողջ ստույգ հարցերի միջով, ինչպես դա մենք տեսնում ենք: Եվ չափազանց բարդ է բարոյական հակամարտությունների վերաբերմունքը մարդկային ազատության եւ մարդկային անհատականության արժանապատվության հանդեպ: Երբեմն օրենքի բարոյագիտությունն է չարակամ ազատության եւ անձնավորության հանդեպ, երբեմն էլ՝ շնորհի բարոյագիտությունը: Շնորհն ինքը չի կարող ազատության ու անձնավորության հանդեպ չարակամ լինել. նա է տալիս ազատություն, փոխակերպում ու ամրապնդում անձնավորությանը: Բայց այն, թե ինչպես է շնորհն անդրադառնում մարդկային աշխարհի վրա, եւ թե ինչպես է այն խեղվում աշխարհում, կարող է հիմք լինել ազատության եւ անձնավորության հանդեպ չարակամ լինելու: Տեղի է ունենում երկակի գործընթաց. շնորհի կացույթ, հոգեւոր հասարակություն, եկեղեցի է ներթափանցում օրինադրությունը, եւ օրենքի կացույթ, աշխարհիկ հասարակություն, պետություն ու մշակույթ է մուծվում շնորհի սկզբնավորումը՝ արդեն խեղված օրինադրությամբ: Եվ մեկից եւ մյուսից ազատության շարժընթացը բռնաբարվում է, իսկ անձնավորությունը տառապում: Մարդկային կենդանի անձնավորությունը բռնաբարվում է ե՛ւ օրենքով, ե՛ւ բռնի շնորհով: Բարոյագիտական բարդ բախումներում տեսնում ենք, թե ինչպես է օրենքը հաշվում կյանքը, այն դեպքում, երբ պետք էր այն հանձնել շնորհի ուժերի ներգործությանը, եւ ինչպես է բռնի շնորհը հաշվում կյանքը, երբ հարկ էր օրենքին հանձնել նրա իրավունքի պաշտպանությունը: Սա տեսանելի է ընտանիքների ու պետության կյանքում, տնտեսության մեջ, մշակույթի տարբեր ոլորտներում: Խնդիրը սարսափելի դժվարանում է նաեւ նրանով, որ բացի օրենքի բարոյագիտությունից եւ փրկաբանական բարոյագիտությունից՝ գոյություն ունի նաեւ ստեղծարարության բարոյագիտություն, որը կապված է մարդու շնորհների եւ նրա կոչման հետ: Այդ բախումները չեն կարող հանգեցնել վերջնական ներդաշնակության՝ մեր երկրային մեղսական կյանքի սահմաններում: Բայց կարող են վերականգնվել արժեքները, որոնց համար կարելի է պայքարել՝ լուծելու համար այդ բախումները: Վերին արժեքները երջանկություն չեն: Բարոյական ողբերգական բախումները ժխտում են այն կեղծ հոգեբանությունն ու բարոյագիտությունը, որոնք երջանկության մեջ տեսնում են մարդկային կյանքի նպատակը: Մարդուն ներշնչել են այն գաղափարը, թե վերին բարօրությունը, վերին նպատակը հենց երջանկությունն է, որպեսզի նրան պահեն ճորտության մեջ: Մարդու ազատությունն ու արժանապատվությունը թույլ չի տալիս երջանկության եւ բավարարվածության մեջ տեսնելու կյանքի նպատակն ու վերին բարօրությունը: Գոյություն ունի անհաղթահարելի բախում ազատության ու երջանկության միջեւ: Դրա վրա է հիմնված Դոստոեւսկու «Լեգենդ Մեծ Հավատաքննիչի մասին» գործը: Ես համաձայն եմ լինել ապերջանիկ ու տառապյալ, որպեսզի մնամ ազատ էակ: Օրենքի բարոյականությունը, որպես արդյունք օրենքի կատարման, երջանկություն է խոստանում: Լսի՛ր ինձ, եւ երջանիկ կլինես: Սակայն շնորհի բարոյագիտությունը, որը ենթարկվում է օրինադրական վերածնության, նույնպես երջանկություն է խոստանում: Մանավանդ կաթոլիկ աստվածաբանությանն է բնորոշ նման էկդեմոնիզմը: Թոմիստները մինչ այսօր էլ հաստատում են այն հոգեբանությունը, ըստ որի՝ մարդը մշտապես ձգտում է երջանկության եւ երանության: Սակայն ժամանակակից հոգեբանությունը, շարունակելով Դոստոեւսկուն, Նիցշեին եւ Կիերկեգորին, միայնգամայն հերքել է այդ ռացիոնալիստական վարդապետությունը: Մարդն ազատ, հոգեւոր ու ստեղծագործական արարած է եւ հոգեւոր արժեքներով ազատորեն ստեղծագործելը նախընտրում է երջանկությունից: Բայց մարդը նաեւ հիվանդ արարած է՝ երկփեղկված, օժտված մութ անգիտակցականությամբ: Այդ իսկ պատճառով էլ նա այն արարածը չէ, որ ամեն գնով ձգտում է երջանկության եւ բավարարվածության: Ոչ մի օրենք չի կարող նրան դարձնել մի արարած, որը երջանկությունը նախընտրի ազատությունից, ստեղծագործելու բավարարվածությունից եւ հանգստությունից: Ահա թե ինչու մարդու կյանքը չի կարող ամբողջովին ենթարկվել օրենքին: Իսկ շնորհն էլ տալիս է լոկ ակնթարթային ուրախություն ու երանություն:

***Թարգմանությունը՝ Ա.Ս.-ի***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լուսավորական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am**

**astghikstam@gmail.com**
**web կայք՝**
**kh-tert.livejournal.com**
**krishayas.wordpress.com**
Ստորագ. տպագր. 2.9.2015 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**